UNIFIED ENROLLMENT

Los Angeles Unified | 2022-2023

CHOICES

LOS ANGELES UNIFIED SCHOOL DISTRICT • STUDENTS AT THE CENTER •



Այցելեք՝ **GoTo.LAUSD.net**

- Մագնիս ծրագրեր
- Փոխադրամիջոցի իրավունքով ծրագիր
- Երկլեզու կրթության ծրագիր
- Բարձրագույն ուսուցման դպրոցներ
- Ընդունելության հատուկ չափանիշներով դպրոցներ
- Չարտերային դպրոցներ

Ձեր LA Unified-ի ճանապարհորդությունը սկսվում է այստեղից

Նոր հնարավորություննե՞ր եք փնտրում Ձեր երեխայի համար: Ընտրանքները ներառում են վեց կրթական ծրագրեր՝ Ձեր երեխայի ուսման համար հիանալի փորձառություններով: Եկեք օգնենք Ձեզ գտնել այն ծրագիրը, որն առավելագույնս կհամապատասխանի Ձեր երեխայի հետաքրքրություններին և կարիքներին:

- Մագնիս ծրագրեր
- Բարձրագույն ուսուցման դպրոցներ
- Փոխադրամիջոցի իրավունքով ծրագիր
- Ընդունելության հատուկ չափանիշներով դպրոցներ
- Երկլեզու կրթության ծրագիր
- Չարտերային դպրոցներ

Ճիշտ ժամանակին դիմելու ժամկետն է՝
2021թ. հոկտեմբերի 1- նոյեմբերի 12

Ուշ դիմումների ընդունման ժամկետը կսկսվի
2022թ. փետրվարի 1-ին

Ուղարկեք թղթային դիմում կամ դիմեք առցանց

Այցելեք՝
GoTo.LAUSD.net

Ունե՞ք հարցեր: Դիմեք մեզ՝ (213) 241-4177 կամ՝ էլ. փոստով՝ ApplyForSchools@lausd.net

Դիմումների ընդհանուր ուղեցույցներ, ծրագրի մասնակցության իրավունք, թղթային դիմումներ և գլոբալ ցանկ

«Մագնիս» ծրագրեր

«Մագնիսը» կամավոր ինտեգրման ծրագիր է, որը տրամադրում է խստապահանջ, բարձրորակ և թեմատիկ կրթություն՝ աշակերտների ուսումը հեշտացնելու և ուսումնական առաջադիմությանը նպաստելու համար:

Փոխադրամիջոցի իրավունքով ծրագիր (անգլ. հապավումը՝ PWT)

PWT ծրագրը L.A. Unified- ի սկզբնական ինտեգրման ծրագրերից մեկն է և ստեղծվել է՝ Շրջանի նախապես որոշված դպրոցներում աշակերտներին ինտեգրված դպրոցական փորձառություն ապահովելու նպատակով:

Երկլեզու կրթության ծրագիր (անգլ. հապավումը՝ DLE)

DLE ծրագրի աշակերտները հնարավորություն ունեն դառնալու երկլեզու և երկգրագետ՝ ձեռք բերելով երկու լեզվով սովորելու հմտություններ բովանդակային բոլոր ոլորտներում և ամրապնդելով ակադեմիական նվաճումները և սոցիալ-մշակութային հմտությունները:

Բարձրագույն ուսուցման դպրոցներ (անգլ. հապավումը՝ SAS)

K-ից մինչև 12-րդ դասարաններով դպրոցները ստանում են բարձրագույն ուսուցման դպրոցի նշանակում՝ օրինակելի այնպիսի գործելակերպերի համար, որոնք համապատասխանում են տաղանդավոր/բարձր ընդունակություն ունեցող սովորողների ուսումնական և սոցիալ-զգայական պահանջներին:

Ընդունելության հատուկ չափանիշներով դպրոցներ (ACS)

ACS ծրագրերն ունեն ընտրության լրացուցիչ պահանջներ: L.A. Unified-ն առաջարկում է երկու ակադեմիաներ՝ միևնույն սեռի համար, և չորս ավագ դպրոցներ՝ քոլեջի միաժամանակ գրամցման հնարավորությամբ: Կարող են դիմել նաև L.A. Unified-ի սահմաններից դուրս բնակվող աշակերտները

Փոխկապակցված չարտերային դպրոցներ

Չարտերային դպրոցները Շրջանի կիսանկախ դպրոցներ են, որոնք ունեն ուսումնական ծրագրի ճկունություն՝ տարբեր աշակերտների պահանջները բավարարելու համար: Կարող են դիմել բնակավայրի հաճախման և L.A. Unified -ի սահմաններից դուրս բնակվող աշակերտները:

L.A. Unified-ի այլ ծրագրեր

L.A. Unified-ն առաջարկում է դպրոցների ընտրության այլ ծրագրեր՝ բացի այս վեց տարբերակներից: Իմացե՛ք ավելին՝ ավագ դպրոցի ընտրության գոտիների, շրջանային բաց ընդունելությունների և այլ հանրային դպրոցների մասին:

CHOICES Ծանուցման նամակներ

ՀՈԿՏԵՄԲԵՐ/ՆՈՅԵՄԲԵՐ	Ճիշտ ժամանակին դիմելու ժամկետները
ԲՈԼՈՐ դիմորդները	Ի՞նչ պետք է ստուգեմ: ▯ Այցելեք՝ https://GoTo.LAUSD.net՝ տեղեկանալու մեր Choices ծրագրերի մասին ▯ Վերանայեք ծրագրի համապատասխանության չափանիշները, եթե կիրառելի է, ինչպես նաև՝ դիմումի ուղեցույցները: Ի՞նչ պետք է անեմ: ▯ Դիմումը ներկայացնելուց առաջ ստուգեք, որ սխալներ չլինեն

- Համոզվեք, որ աշակերտների/ծնողների տվյալները թարմացված են, և ճշգրիտ են դպրոցի կայքում
- Ներկայացրեք ձեր դիմումը 2021 թ. նոյեմբերի 12 -ին կամ մինչ այդ (առցանց կամ փոստակնքված)

ՀՈԿՏԵՄԲԵՐ/ՆՈՅԵՄԲԵՐ

Շնորհալի մագնիս/Խիստ շնորհալի մագնիս/SAS ստուգում

Միայն ընտրված ծրագրերը

GIFTED/HIGHLY GIFTED MAGNET

SAS

Ի՞նչ պետք է անեմ

- Եթե դիմում եք Շնորհալի մագնիսին կամ Խորացված ուսուցման դպրոցներին (SAS), և գրանցվում եք ոչ շրջանային դպրոցում (մասնավոր, անկախ չարտերային), համոզվեք, որ հաճախման դպրոցը ներկայացրել է Մասնակցության իրավունքի հաստատման ձևը 2021 թվականի նոյեմբերի 12-ին կամ դրանից առաջ (էլեկտրոնային նամակով կամ փոստակնքված): (ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Մասնակցության իրավունքի հաստատման ձևը ՉԻ պահանջվում Շնորհալի մագնիս/SAS դիմորդների համար, ովքեր այժմ գրանցված են Los Angeles Unified դպրոցում, ներառյալ City of Angels -ի առցանց կրթությունը: Դիմումը ստանալուց հետո Շրջանը ավտոմատ կերպով կքննի իրավասությունը՝ Շրջանի ստուգման գործընթացի միջոցով, 2022 թ. հունվարին):
- Եթե դիմում եք Շնորհալի մագնիսին կամ Խորացված ուսուցման դպրոցներին (SAS) և տնային պայմաններում եք կրթություն ստանում (առանց ստուգող կազմակերպության) կամ դպրոցում գրանցված չեք, դիմեք՝ GATE@lausd.net՝ վերջնաժամկետից՝ 2021 թ. նոյեմբերի 12 -ին կամ դրանից առաջ, որպեսզի ստուգման գործընթացը սկսվի:
- Խիստ շնորհալի մագնիս / Highly Gifted Magnet ծրագրին դիմելու դեպքում ծնողները/խնամակալները կարող են կապվել Gifted/Talented ծրագրերի հետ՝ (213) 241-4177 հեռախոսահամարով կամ GATE@lausd.net հասցեով՝ իրավասությունը հաստատելու համար:

ԴԵԿՏԵՄԲԵՐ

Հաստատման/ուղղման ծանուցում

ԲՈԼՈՐ դիմորդները

Ի՞նչ պետք է ստուգեմ:

- Դիմումի սխալները
- Մագնիսի առաջնահերթ միավորները, եթե կիրառելի է (Տեղեկությունների համար տե՛ս էջ 19)
- Ստուգել, որ քույր/եղբայրների մասին տեղեկությունը ճիշտ է

Ի՞նչ պետք է անեմ

- Կատարել ուղղումներ մինչև նամակի վրա նշված վերջնաժամկետը

ՓԵՏՐՎԱՐ

Ծրագրի մասնակցության իրավունքի ծանուցում

Ի՞նչ պետք է ստուգեմ:

Միայն ընտրված ծրագրերը

GIFTED/HIGHLY GIFTED MAGNET

SAS

ACS

- Իրավասու - դիմումն անցնում է ընտրության գործընթաց
- Իրավասու չէ - ծրագրի դիմումը հանվում է յուրաքանչյուր ոչ իրավասու ընտրանքի համար

Ի՞նչ պետք է անեմ

- Ոչ մի գործողություն չի պահանջվում
- Իրավասու չի նշանակում ընտրված

ՄԱՐՏ

Ընտրված լինելու/Սպասման ցուցակի ծանուցում

ԲՈԼՈՐ դիմորդները

Ի՞նչ պետք է ստուգեմ:

- Կարգավիճակը՝ ընտրված կամ սպասման ցուցակում

Ի՞նչ պետք է անեմ

- Եթե ընտրվել եք, ընդունեք կամ մերժեք առցանց կամ կապվեք դպրոցի հետ, մինչև վերջնաժամկետը: Ոչ մի պատասխան չստանալը կհամարվի մերժում: Բոլոր մերժումները վերջնական են:
- Սպասման ցուցակի դեպքում ոչ մի գործողություն չի պահանջվում: Եթե հասանելի տեղ լինի, դպրոցը Ձեզ կտեղեկացնի այդ մասին:

Մենք խրախուսում ենք ձեզ ուշ դիմումներ ներկայացնել այլ ծրագրերի համար: (Տեղեկությունների համար տե՛ս էջ 6):

Թղթային դիմումներ ուղարկած աշակերտները նամակներ կստանան U.S. փոստով:

Առցանց դիմորդներին նամակներ կուղարկվեն իրենց առցանց հաշվին:

ԻՆՉՊԵ՞Ս Է ԳՈՐԾՈՒՄ CHOICES / ԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Ցուրաքանչյուր Choices/ Ընտրանքի ծրագրի համար կա յուրահատուկ ընտրական գործընթաց: Տեղեկությունների համար դիմեք հետևյալ բաժիններին՝

- MAGNET PROGRAMS / ՄԱԳՆԻՍ ԾՐԱԳՐԵՐ
- SCHOOLS FOR ADVANCED STUDIES / ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ
- PERMITS WITH TRANSPORTATION / ՓՈԽԱԴՐԱՍԻՋՈՑԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԾՐԱԳԻՐ
- ADMISSION CRITERIA SCHOOLS / ՀԱՏՈՒԿ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ
- DUAL LANGUAGE EDUCATION / ԵՐԿԼԵԶՈՒ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ
- AFFILIATED CHARTER SCHOOLS / ՉԱՐՏԵՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐ

- Մեկ դիմումով կարող եք դիմել մեկ կամ մի քանի Ընտրանքների ծրագրերի համար:
- Դիմելուց առաջ խնդրում ենք զանգահարել դպրոց՝ տեղեկատվություն ստանալու դպրոցի ծանոթացման հանդիպումների, շրջայցերի, համազգեստի պահանջների, ավտոբուսի երթուղու (եթե կիրառելի է) և այլ առնչվող տեղեկությունների վերաբերյալ:
- Լրացնելով Ընտրանքների դիմումը՝ ծնողը կամ խնամակալը համաձայնում են պահպանել ծրագրով սահմանված համազգեստի քաղաքականությունը կամ սահմանված հագուստի կանոնները:
- Ներկայացրեք նոր դիմում, եթե անցյալ տարի երեխայի անունը մնացել է սպասման ցուցակում, եթե ցանկանում եք մի ծրագիրից մյուսը փոխվել կամ, եթե Ձեր երեխան փոխադրվում է (օրինակ՝ տարրական կամ միջին դպրոցից):
- Մի՛ ներկայացրեք նոր դիմում, եթե Ձեր երեխան ներկայումս ընդգրկված է «Ընտրանքի» ծրագրում և ցանկանում է շարունակել նույն ծրագրում:
- Երկվորյակ կամ եռյակ դիմորդները պետք է նույն հասցեում բնակվեն և նույն տարում դիմեն նույն ծրագրին (միայն առաջին ընտրության համար), որպեսզի հաջորդաբար անցնեն Ընտրանքի ծրագրի ընտրական գործընթացի փուլ:
- Այն աշակերտների եղբայրներն ու քույրերը, ովքեր լքել են դպրոցը, ավարտել են այն կամ ավարտում են ընթացիկ տարում, չունեն եղբոր/քրոջ գործոնի նախապատվությունը: Դիմում ներկայացնելիս եղբայրը կամ քույրը պետք է բնակվեն նույն բնակության վայրում: Ծնողի/խնամակալի պարտականությունն է՝ մինչև դիմումի վերջնաժամկետը ստուգել, որ քույր/եղբայրներն իրենց L.A. Unified-ի ընթացիկ դպրոցի համակարգչային համակարգում գրանցված են նույն հասցեում:
- Քրոջ/եղբոր գործոնի նախապատվություն ստանալու համար ծնողը/խնամակալը պետք է նշի յուրաքանչյուր քրոջ և եղբոր անունները՝ Ընտրանքների հայտում և նշի բոլոր քույրերին ու եղբայրներին իրենց «Դիմումի» (Apply) հաշվի մեջ: Քրոջ/եղբոր նախապատվությունը կտրվի այն դիմորդներին, որոնց քույրերը/եղբայրները ներկայումս գրանցված են նույն դպրոցում / ծրագրում, որտեղ իրենք դիմում են:
- Ծողները ընտրվելու մասին ծանուցում կստանան մարտի կեսերին: Ընտրված լինելու դեպքում՝ ծնողը/խնամակալը պետք է ընդունի այն կամ մերժի, մինչև ընտրվելու/սպասման ցուցակի նամակում նշված վերջնաժամկետը: **Եթե ծնողը/խնամակալը չի արձագանքում մինչև վերջնաժամկետը, ապա այն համարվում է մերժում: Բոլոր մերժումները վերջնական են:**
- Ծնողը/խնամակալը կարող է ընդունել կամ մերժել առցանց՝ մուտք գործելով իրենց apply.lausd.net հաշիվը կամ կապ հաստատելով դպրոցի հետ, մինչև ընտրման ցուցակի նամակում նշված վերջնաժամկետը:
- Դուք կարող եք ընդունել միայն մեկ Ընտրանքների ծրագրի առաջարկ: Ներկայումս Ընտրանքների ծրագրում ընդգրկված դիմորդները, որոնք դիմում են, ընտրվում և ընդունում են Ընտրանքների մեկ այլ ծրագիր, ինքնաբերաբար դուրս են մնում իրենց ընթացիկ ծրագրից:
- Եթե աշակերտը չի ընտրվում, ապա նա կհայտնվի սպասման ցուցակի մեջ՝ ՄԻԱՅՆ իր առաջին ընտրած տարբերակի համար՝ յուրաքանչյուր կիրառելի ծրագրի շրջանակներում: Ձեր երեխայի անունը կմնա սպասման ցուցակում՝ անկախ նրանից՝ Դուք այլ ծրագիր եք ընդունում կամ մերժում: Չարտերային դպրոցների այն դիմորդները, որոնք չեն ընտրվել, կհայտնվեն յուրաքանչյուր իրենց դիմած չարտերային դպրոցների սպասման ցուցակում:
- Սպասման ցուցակում հայտնված աշակերտների հետ անմիջապես կկապվի դպրոցի (դպրոցների) ներկայացուցիչը, եթե ազատ տեղ լինի:
- Եթե աշակերտը հրաժարվում է Մագնիսի ծրագրից, ապա կորցնում է Մագնիսի առաջնահերթության միավորները:
- Եթե դիմում եք ներկայացրել և ցանկանում եք հանել Ձեր դիմումը ընտրական գործընթացից, ապա մինչև 2021թ. դեկտեմբերի 17-ը պետք է էլ. նամակ ուղարկեք հետևյալ հասցեին՝ ApplyforSchools@lausd.net կամ ուղարկեք Ձեր դիմումը՝ Unified Enrollment, P.O. Box 513307, Los Angeles, CA 90051 հասցեին:
- Ընտրանքների առցանց դիմումները կարելի է թարմացնել, մինչև 2021թ. նոյեմբերի 12-ը:
- Եթե միևնույն աշակերտի համար ներկայացվեն ժամանակին դիմած Ընտրանքների բազմաթիվ դիմումներ, ապա առաջին դիմումը կհամարվի վավեր, իսկ մնացած բոլորը՝ անվավեր:
- The 2022-23 CHOICES / ԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ բրոշյուրը և թղթե տարբերակը հասանելի են առցանց՝ goto.lausd.net կայքում կամ Los Angeles Unified դպրոցներում կամ գրասենյակներում:

Անցումային մանկապարտեզ, մանկապարտեզ և առաջին դասարան դիմողները

Կալիֆորնիայի Կրթական Օրենսգրքի 46300, 48000, 48010 բաժինների և Սենատի Օրինագծի 1381 բանաձևի համաձայն՝ երեխան իրավասու է անցումային մանկապարտեզի (TK) համար, եթե նա 5 տարեկան կդառնա սեպտեմբերի 2-ից դեկտեմբերի 2-ը ընկած ժամանակահատվածում: Մանկապարտեզ ընդունվող երեխաների 5 տարեկանը պետք է լրացած լինի մինչև սեպտեմբերի 1-ը, իսկ առաջին դասարանի աշակերտների 6 տարեկանը պետք է լրացած լինի մինչև սեպտեմբերի 1-ը:

Աշակերտները կարող են դիմել միայն Ընտրանքների այն ծրագրի համար, որի համար նրանք համապատասխանում են տարիքային պահանջներին: Աշակերտները պետք է համապատասխանեն տարիքային պահանջին՝ անկախ նրանից, թե ընթացիկ ուսումնական տարվա որ դասարանում են սովորում: Դասարանի տեղաբաշխման հետ կապված հետագա բոլոր որոշումները կայացնում է աշակերտին ընդունող դպրոցի տնօրենը: Ոչ բոլոր Ընտրանքների ծրագրերը կամ դպրոցներն են առաջարկում անցումային մանկապարտեզի հնարավորություն: Ընտրանքների այն ծրագրերը, որոնք առաջարկում են անցումային մանկապարտեզի դասընթաց, նշված են Ընտրանքների գրքույկում:

Նախքան երեխայի ընդունելությունը՝ անցումային մանկապարտեզ, մանկապարտեզ կամ առաջին դասարան, ծնողը/խնամակալը պետք է ապացույց ներկայացնի, որ երեխան համապատասխանում է ընդունելության համար օրենքով սահմանված նվազագույն տարիքին: Տեղեկատվության կեղծման դեպքում դիմողը կհեռացվի ծրագրից: Դիմումը ճիշտ լրացնելը երեխայի ծնողի կամ օրինական խնամակալի պարտականությունն է:

ԻՆՉՊԵ՞Ս Է ԳՈՐԾՈՒՄ ՈՒՇ ԸՆՏՐԱՆՔԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

- Եթե բաց եք թողել ժամանակին հայտ ներկայացնելու ժամկետը, ապա կարող եք ուշ դիմումներ ներկայացնել 2022 թվականի փետրվարի 1-ից:
- Ծնողը/խնամակալը կարող է ուշ դիմումներ ներկայացնել այնքան ծրագրերի համար, որքան կցանկանա: Յուրաքանչյուր դպրոցի համար պետք է ներկայացվի առանձին ուշ դիմում:
- Ներկայացրեք ուշ դիմումներն առցանց՝ https://apply.lausd.net հասցեով կամ փոստով ուղարկեք հետևյալ հասցեին՝ Unified Enrollment, P.O. Box 513307, Los Angeles, CA 90051
- Փոխադրամիջոցի իրավունքով ծրագրերը (PWT) չեն ընդունում ուշ դիմումներ:
- Ուշ դիմումներին ոչ մի միավոր, նախապատվություն կամ առաջնահերթություն չի տրվում:
- Ուշ դիմումները, կիրառելիության դեպքում, ավելացվում են դպրոցի սպասման ցուցակի վերջում, և դիմորդների հետ կապ է հաստատվում՝ ըստ հերթականության: Դպրոցը կապ կհաստատի ծնողի/խնամակալի հետ, եթե/երբ որևէ տեղ հասանելի լինի: Ծնողի/խնամակալի հետ կարող են կապվել ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի առաջին չորս շաբաթների ընթացքում: Բացառություններ. Երկլեզու կրթության և Փոխկապակցված չարտերային դպրոցի դիմորդները մնում են սպասման ցուցակում՝ մինչև այն ուսումնական տարվա ավարտը, որի համար դիմել են:
- Ուշ դիմումները չեն ազդում ժամանակին դիմելու գործընթացի վրա: Եթե Դուք ժամանակին դիմել եք և գտնվում եք դպրոցի սպասման ցուցակկում, ապա կարիք չկա ուշ դիմում ներկայացնել նույն ծրագրի համար:
- Շնորհալի / խիստ շնորհալի Մագնիս / Gifted/Highly Gifted Magnet ծրագրերի և Խորացված ուսուցման դպրոցների / Schools for Advanced Studies (SAS) համար ուշ դիմում ներկայացրած աշակերտները պետք է բավարարեն ծրագրի համար պահանջվող հատուկ չափանիշները, այնուամենայնիվ, իրավասության ստուգումը կատարվում է դպրոցի տեղամասում: Ուշ դիմորդների իրավասության ձևերի հաստատումը, կիրառելիության դեպքում, պետք է ուղղակիորեն ներկայացնել ընտրված դպրոցին, երբ դպրոցը ծնողի հետ կապ հաստատի առկա տեղի համար:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

UNIFIED ENROLLMENT

ՇՆՈՐՀԱԼԻ/ԽԻՍ ՇՆՈՐՀԱԼԻ ՄԱԳՆԻՍ / "GIFTED/HIGHLY GIFTED MAGNET" ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ / "SCHOOLS FOR ADVANCED STUDIES" ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ԲՈԼՈՐ ԸՆԹԱՑԻԿ L.A. UNIFIED ԴԻՄՈՐԴՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԿԱՐԴԱՆ Ա, Բ և Գ ԲԱԺԻՆՆԵՐԸ:
ԲՈԼՈՐ ՄԱՄՆԱՎՈՐ, ԱՆԿԱԽ ՉԱՐՏԵՐԱՅԻՆ ԵՎ L.A. UNIFIED-Ի ԿԱԶՄՈՒՄ ՉԳՏՆՎՈՂ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԴԻՄՈՐԴՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԿԱՐԴԱՆ Ա, Բ և Դ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Նախքան հայտ ներկայացնելը՝ ուշադիր կարդացեք ստորև ներկայացված բաժինները՝ դիմումը ճիշտ և ժամանակին լրացնելու համար: Կիրառվող չափանիշներին մինչև վերջնաժամկետը չհամապատասխանելու դեպքում՝ Ձեր հայտը դուրս կմնա ընտրության գործընթացից:

ԲԱԺԻՆ Ա. ՇՆՈՐՀԱԼԻ ՄԱԳՆԻՍ ԵՎ ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԴԻՄՈՐԴՆԵՐԸ

1. Աշակերտը համապատասխանում է Բաժին Բ-ում սահմանված ծրագրին բնորոշ չափանիշներին: Ծնողի/խնամակալի պարտականությունն է, նախքան հայտ ներկայացնելը, ընթացիկ դպրոցի հետ ստուգել դիմորդի՝ չափանիշների համապատասխանությունը և, անհրաժեշտության դեպքում, ներկայացնել ***«Մասնակցության իրավունքի հաստատման»*** ձևը, մինչև վերջնաժամկետը:
2. Աշակերտը բնակվում է Los Angeles Unified-ի սահմաններում՝ հայտը ներկայացնելու և ծրագրին մասնակցելու/գրանցվելու պահին:
3. Եթե աշակերտը դիմում է նոր դպրոց/ծրագրին կամ ընդունվում է 5-րդ/6-րդ կամ 8-րդ դասարանից (ավարտել է տարրական կամ միջնակարգ դպրոցը), ապա Շնորհալի մագնիս ծրագրում կամ Խորացված ուսուցման դպրոցներում (SAS) ուսումը շարունակելու նրա իրավասությունը վերահաստատվում է ընթացիկ դպրոցի կողմից, որտեղ նա հաճախում է:
4. Դիմորդն ընդունում է, որ ուշ հաստատումը չի ընդունվելու, և ընթացիկ դպրոցի տնօրենի կողմից ներկայացված երաշխավորագիրը վերջնական է:

ԲԱԺԻՆ Բ. ԾՐԱԳՐԻՆ ԲՆՈՐՈՇ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ՇՆՈՐՀԱԼԻ ՄԱԳՆԻՍ ԿԱՄ ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԴԻՄՈՐԴՆԵՐԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Շնորհալի Մագնիս և Խորացված ուսուցման դպրոցների (SAS) ծրագրերն առաջարկում են հարուստ միջառարկայական ակադեմիական միջավայր, որը գրավիչ է, մարտահրավերային և խրախուսում է աշակերտներին օգտագործելու ստեղծագործական/քննադատողական մտածողության հմտությունները: Երկուսն էլ ծառայում են այն աշակերտներին, ովքեր ցուցաբերում են ունակություն կամ մեծ ներուժ՝ ուսումնական առարկաներից դասարանի մակարդակից երկու տարով ավել մակարդակի վրա գտնվելու և ստորև թվարկված չափանիշներից առնվազն ՄԵԿԻՆ համապատասխանելու համար: (Ընտրության գործընթացում բոլոր չափանիշներն ունեն հավասար կշիռ):

ՇՆՈՐՀԱԼԻ ՄԱԳՆԻՍ ԿԱՄ ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ՝ ՊԵՏՔ Է ՀԱՍՏԱՏՎԻ ԴԻՄՈՐԴԻ՝ ՀԵՏԵՎՅԱԼ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՑ ՈՐԵՎԷ ՄԵԿԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵԼԸ, ՄԻՆՉԵՎ 2021 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ը, ՈՒՐԲԱԹ ՕՐԸ, ԺԱՄԸ՝ 17:00:

Ա. Աշակերտը L.A. Unified-ի կողմից նշանակված GATE հոգեբանի կողմից ճանաչվում է շնորհալի՝ ինտելեկտուալ, բարձր նվաճման, հատուկ ակադեմիական, ստեղծագործական կամ առաջնորդական ընդունակությունների դասակարգում:

- **Հայտը ստանալուն պես՝ Շրջանը ավտոմատ կերպով ստուգում է դիմորդի իրավասությունը՝ L.A. Unified-ի դպրոցի տվյալների բազայի միջոցով:**
- **Եթե դիմորդը L.A. Unified-ի կողմից ճանաչվել է՝ որպես տաղանդավոր, սակայն ներկայումս հաճախում է մասնավոր դպրոց, անկախ չարտերային կամ L.A. Unified-ի կազմում չգտնվող դպրոց, ապա ծնողը/խնամակալը պետք է ներկայացնի «*Մասնակցության իրավունքի հաստատման*» ձևը՝ հավաստիացնելու համար, որ դիմորդը ներառված է Շրջանի տվյալների բազայում:** ԿԱՄ

Բ. Կիրառելիության դեպքում, Շրջանի կողմից հաստատված ստանդարտացված նորմերով թեստերից 2021 թ. աշակերտը գրանցել է 85% կամ ավելի արդյունք՝ ընդհանուր երկրի մակարդակով տոկոսային գնահատմամբ: Նշում. 2020-2021 ուս.տարվա «Ավելի խելացի հավասարակշռված գնահատման կոնսորցիումի» (SBAC) հեռացման պատճառով այս չափանիշը փոփոխվել է միայն այս տարվա համար: ԿԱՄ

Գ. Աշակերտը ցուցաբերում է համապատասխանություն՝ ստորև նշված քննադատական մտածողության և խնդիրների լուծման ԲՈԼՈՐ ՉՈՐՍ հմտություններից (հիմնական լեզվով)

a) **Բացատրել փաստերի, տեղեկատվության, կամ հասկացությունների իմաստները կամ դրանց միջև հարաբերությունները՝ ցուցադրելով խորացված և բազմակողմանի մոտեցում**
b) **Ձևակերպել նոր գաղափարներ կամ լուծումներ և մշակել տեղեկատվությունը**
c) **Օգտագործել այլընտրանքային մեթոդներ՝ նոր կամ անծանոթ մաթեմատիկական խնդիրներ լուծելիս**
d) **Հեշտությամբ և ճշգրիտ օգտագործել լայն բառապաշար՝ ստեղծագործ մտքեր արտահայտելու համար**

Աշակերտի հաճախած դպրոցը որոշելու է, թե արդյոք Ձեր երեխան ցուցաբեռում է այս չափանիշի բոլոր չորս հմտությունները (այսինքն՝ քննադատական մտածողության և խնդիրների լուծման չորս հմտությունները): Քննադատական մտածողության և խնդիրների լուծման չորս հմտությունների չափանիշով ստուգված դիմորդները պետք է նաև ցուցաբերեն ունակություն կամ մեծ ներուժ՝ ուսումնական առարկաներից դասարանի մակարդակից երկու տարով ավել մակարդակի վրա գտնվելու համար: ՆՇՈՒՄ: Մանկապարտեզի SAS (բարձրագույն ուսուցման դպրոցների) դիմորդները նույնպես պետք է ստուգվեն՝ օգտագործելով «*Մասնակցության իրավունքի հաստատման» (SAS մանկապարտեզ) ձևի* հատուկ չափանիշները:

ԽԻՍ ՇՆՈՐՀԱԼԻ ՄԱԳՆԻՍ ԾՐԱԳՐԻ ԴԻՄՈՐԴՆԵՐԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Խիստ շնորհալի մագնիս ծրագրի կենտրոնները խմբավորում են աշակերտներին՝ թույլ տալով նրանց մասնակցել մեծ պահանջարկ ունեցող լայնաշերտ ակադեմիական ծրագրի, որը տալիս է բարձրագույն կրթական հնարավորություններ՝ ինտելեկտուալ տաղանդով օժտված աշակերտներին՝ նրանց կարիքները, հետաքրքրությունները և նպատակները բավարարելու համար: Շեշտը դրվում է խնդիրների լուծման և բաձր մակարդակի մտածողության հմտությունների զարգացման, ինչպես նաև՝ դրական սոցիալական-զգայական աճի վրա:

Խիստ շնորհալի մագնիս ծրագրին դիմելու իրավունք ունեցող աշակերտները L.A. Unified-ի բնակիչներ են, ովքեր համապատասխանում են՝

- **Խիստ շնորհալի (HG) համար սահմանված չափանիշներին՝ 99.9% արդյունքով՝ L.A. Unified-ի կողմից նշանակած GATE հոգեբանի կողմից ղեկավարվող ինտելեկտուալ կարողությունների գնահատումից:** ԿԱՄ
- **Խիստ շնորհալի կիրառելիի (HGA) չափանիշներին (99.5%–99.8% արդյունքով) L.A. Unified-ի նշանակած GATE հոգեբանի կողմից ղեկավարվող ինտելեկտուալ կարողությունների գնահատումից:**

ԲՈԼՈՐ ԴԻՄՈՐԴՆԵՐԸ, ՈՎՔԵՐ ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾ ԵՆ ԽԻՍ ՇՆՈՐՀԱԼԻ ՄԱԳՆԻՍ ԾՐԱԳՐՈՎ, ՊԵՏՔ Է ԳՆԱՀԱՏՎԵՆ ԵՎ ԻԴԵՆՏԻՖԻԿԱՑՎԵՆ ՄԻՆՉԵՎ ՈՒՐԲԱԹ, 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ը, ՈՐՊԵՍԶԻ ԻՐԱՎԱՍՈՒ ԼԻՆԵՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԴԻՄԵԼՈՒ ԵՎ ԸՆՏՐՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

«Խիստ շնորհալի»/«Խիստ շնորհալի կիրառելի» (HG/HGA) ճանաչված աշակերտները նույնպես իրավասու են դիմել Շնորհալի Մագնիս ծրագրին կամ Խորացված ուսուցման դպրոցին (SAS):

Հայտը ստանալուն պես՝ Շրջանը ավտոմատ կերպով կստուգի դիմորդի իրավասությունը՝ L.A. Unified-ի դպրոցի տվյալների բազայի միջոցով: Եթե դիմորդը L.A. Unified-ի կոմից ճանաչվել է՝ որպես «խիստ շնորհալի»/«խիստ շնորհալի կիրառելի», և ներկայումս հաճախում է մասնավոր դպրոց, անկախ չարտերային կամ Լոս Անջելես Միացյալի կազմում չգտնվող դպրոց, ապա ծնողը/խնամակալը պետք է ներկայացնի ***Մասնակցության իրավունքի հաստատման*** ձև՝ հավաստիացնելու համար, որ դիմորդը ներառված է Շրջանի տվյալների բազայում:Ծնողները/խնամակալները կարող են կապ հաստատել «Տաղանդավոր/շնորհալի ծրագրերի» հետ՝ (213) 241-4177 հեռախոսահամարով կամ՝ gate@lausd.net էլ. փոստի միջոցով՝ ստուգելու աշակերտի համապատասխանությունը Խիստ շնորհալի մագնիս ծրագրին:

ՆՇՈՒՄ. Լոս Անջելեսի Միացյալ Դպրոցական Շրջանն առաջարկում է ծրագրեր՝ բոլոր տեղական ռեզիդենտ դպրոցների, ինչպես նաև՝ Մագնիս և Խորացված ուսուցման դպրոցների տաղանդավոր/շնորհալի աշակերտների համար: Բացի այդ, դպրոցներից մի քանիսն առաջարկում են մասնագիտացված ծառայություններ խիստ շնորհալի աշակերտների համար (օրինակ՝ «Խիստ շնորհալի ուղին» Peary միջնակարգ դպրոցում և Wright միջնակարգ դպրոցում): Խնդրում ենք զանգահարել դպրոց կամ Ձեզ հետաքրքրող Մագնիս ծրագրի կենտրոն, եթե ցանկանում եք լրացուցիչ տեղեկություններ ստանալ տաղանդավոր և շնորհալի կրթության (GATE) ծառայությունների և աջակցության մասին:

ԲԱԺԻՆ Գ. LOS ANGELES UNIFIED-Ի ԴԻՄՈՐԴՆԵՐԸ (ՆԵՐԿԱՅՈՒՍՍ LOS ANGELES UNIFIED-Ի ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ)

Չնայած Los Angeles Unified դպրոցների դիմորդները պետք է համապատասխանեն Բաժին Բ-ում սահմանված ծրագրին բնորոշ չափանիշներին, այնուամենայնիվ, ***Մասնակցության իրավունքի հաստատման*** ձևը ՉԻ պահանջվում K-ից 12-րդ դասարանների այն դիմորդներց, ովքեր ներկայումս գրանցված են Los Angeles Unified -ի որևէ դպրոցում, ներառյալ City of Angels-ի առցանց ուսուցումը: Հայտը ստանալուն պես՝ 2022 թ. հունվարին Շրջանը ավտոմատ կերպով ստուգում է դիմորդի իրավասությունը՝ Շրջանի հաստատման գործընթացի միջոցով: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել Los Angeles Unified-ի՝ Ձեր երեխայի դպրոց:

ԲԱԺԻՆ Դ. ՄԱՍՆԱՎՈՐ, ԱՆԿԱԽ ՉԱՐՏԵՐԱՅԻՆ ԵՎ LOS ANGELES UNIFIED-Ի ԿԱԶՄՈՒՄ ՉԳՏՆՎՈՂ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԴԻՄՈՐԴՆԵՐԸ

Մասնավոր դպրոցի, անկախ չարտերային և Los Angeles Unified-ի կազմում չգտնվող դպրոցների այն դիմորդների ծնողները/խնամակալները, ովքեր դիմում են Շնորհալի մագնիս ծրագրին կամ Խորացված ուսուցման դպրոցի ծրագրին, պետք է հետևեն ստորև ներկայացված ընթացակարգերին: Այն ներառում է SAS ծրագրի մանկապարտեզի այն դիմողներին, ովքեր հաճախում են Los Angeles Unified-ի կազմում չգտնվող նախադպրոցական կամ անցումային մանկապարտեզ (TK): Ծնողի/խնամակալի պարտականությունն է համոզվել, որ ընթացիկ դպրոցը ներկայացրել է անհրաժեշտ բոլոր հաստատման ձևերը, նախքան 2021 թ. նոյեմբերի 12-ը, ուրբաթ օրը, ժամը՝ 17:00:

Եթե դիմորդը նախկինում L.A. Unified-ի կողմից նշանակված GATE հոգեբանի կողմից ճանաչվել է՝ որպես շնորհալի/խիստ շնորհալի և ներկայումս հաճախում է մասնավոր, անկախ չարտերային կամ L.A. Unified-ի կազմում չգտնվող դպրոց, ապա նրա ծնողը/խնամակալը պետք է ներկայացնի «Մասնակցության իրավունքի հաստատման» ձևը՝ հավաստիանալու համար, որ դիմորդը ներառված է Շրջանի տվյալների բազայում:

ԸՆԹԱՑԻԿ ԴՊՐՈՑԻՑ ՀԱՍՏԱՏՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՐՑՈՒՄ

ՏԱՐԲԵՐԱԿ 1:

Այցելեք eChoices.lausd.net՝ ***SAS Kindergarten-ի Մասնակցության իրավունքի հաստատման*** ձևը կամ ***1-12-րդ դասարանների Մասնակցության իրավունքի հաստատման*** ձևը ներբեռնելու համար: (Ձևերը կարող եք գտնել՝ քլիք անելով «Who is eligible?»)

Լրացրեք դիմորդի և ծնողի մասին տեղեկությունների բաժինը, ստորագրեք և նշեք ամսաթիվը:

Հայտի ձևը տրամադրեք ընթացիկ դպրոցին կամ ուղարկեք փոստով՝ թույլ տալով դպրոցին լրացնել անհրաժեշտ բոլոր բաժինները:

ՏԱՐԲԵՐԱԿ 2: Զանգահարեք Ընտրանքների հարցով աջակցման կենտրոն՝ (213) 241-4177 հեռախոսահամարով կամ գրեք giftedverification@lausd.net հասցեին՝ խնդրելով ***Մասնակցության իրավունքի հաստատման*** համապատասխան ձևը:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Մասնակցության իրավունքի հաստատման ձևը աշակերտի ընթացիկ դպրոցի կողմից լրացնելուց հետո դպրոցի տեղամասի աշխատակիցները պետք է ներկայացնեն լրացված և ստորագրված ձևը՝ մինչև 2021 թ. նոյեմբերի 12-ը՝ ուրբաթ օրը: ***Մասնակցության իրավունքի հաստատման*** ձևը պետք է ներկայացնել դպրոցի պաշտոնական փակ ծրարով՝ կնքված կողմի վրա դպրոցի տնօրենի ստորագրությամբ, կամ պետք է դպրոցի կողմից ուղարկվի էլեկտրոնային փոստով: Էլ. փոստը ուղարկման նախընտրելի եղանակն է: Ուղարկողը կստանա էլ.փոստի հաստատում: Ձեռաթուղթը հայտի հետ չներկայացնել: Ուշ ձեռաթղթերը չեն ընդունվի:

U.S. փոստով՝	ԿԱՄ	Էլեկտրոնային փոստով՝
Unified Enrollment P.O. Box 513307 Los Angeles, CA 90051		giftedverification@lausd.net

ՆՇՈՒՄ. ***Մասնակցության իրավունքի հաստատման*** ձևը հայտադիմում ՉԷ: Ընտրանքների դիմումահայտը ներկայացնելուց բացի, նախքան վերջնաժամկետը՝ 2021 թ. նոյեմբերի 12-ը՝ ուրբաթ օրը, պետք է ներկայացնել ***Մասնակցության իրավունքի հաստատման*** ձևը: Ծնողի/խնամակալի պարտականությունն է ապահովել, որ ***Մասնակցության իրավունքի հաստատման*** լրացված ձևը ներկայացվի դպրոց, մինչև վերջնաժամկետը: SAS մանկապարտեզի այն դիմորդներ, ովքեր ընդգրկված չեն նախադպրոցական հաստատությունում կամ անցումային մանկապարտեզում, խնդրում ենք կապ հաստատել Շնորհալի / տաղանդավոր ծրագրերի բաժնի հետ՝ (213) 241-4177 հեռախոսահամարով կամ gate@lausd.net էլ. փոստով՝ ստուգման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկությունների համար, կամ այցելեք achieve.lausd.net/gate (ընտրեք Program Options և SAS): Ծրագրի իրավասության նամակները կուղարկվեն փետրվարին՝ նշելով դիմողի իրավասության կարգավիճակը Շնորհալի մագնիս ծրագրերի և Խորացված ուսուցման դպրոցների (SAS) համար: Իրավասու աշակերտների ընտրվելու / սպասման ցուցակի մեջ գտնվելու մասին նամակները կուղարկվեն մարտ ամսին: Gifted/Highly Gifted Magnet-ի և SAS-ի Ընտրանքների ուշ դիմողների ստուգման վերաբերյալ տեղեկությունների համար տե՛ս էջ 6:

MAGNET/ ՄԱԳՆԻՍ ԾՐԱԳՐԵՐ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱԳՆԻՍ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՄԱԳՆԻՍ ԾՐԱԳՐԵՐԸ:

L.A. Unified-ի Մագնիս դպրոցները/կենտրոնները կամավոր ինտեգրման ծրագրեր են, որոնք ապահովում են խստապահանջ, բարձրորակ, թեմատիկ կրթություն, որը նախատեսված է աշակերտների ուսման հեշտացման և ակադեմիական հաջողությունների խթանման համար: Հիմնադրվելով 1977 թ.-ին՝ մեր Դպրոցական Շրջանի Մագնիս ծրագրերը երկրում ամենահաջողվածներից մեկն են եղել: Ներկայումս գործում են 310 Մագնիս ծրագրեր, որոնք տեղակայված են Շրջանի ամբողջ տարածքում: 2021-2022 թթ. հասանելի տեղերի մոտավոր քանակը և 2020-2021 թթ. բոլոր Մագնիս դպրոցներ կամ կենտրոններ ներկայացրած դիմումների քանակը կարելի է գտնել յուրաքանչյուր դպրոցի անվան տակ: Շրջանի բոլոր աշակերտներին, ներառյալ անգլերեն սովորողներին, ստանդարտ անգլերեն սովորողներին, հաշմանդամություն ունեցող աշակերտներին և շնորհալի/ տաղանդավոր աշակերտներին խրախուսում ենք դիմել:

Որոշ Մագնիսի ծրագրեր զբաղեցնում են դպրոցական տեղամասերն ամբողջությամբ (դրանք «Լիարժեք մագնիս դպրոցներն» են), մյուսները Մագնիս կենտրոններ են, որոնք տեղակայված են բնակավայրի դպրոցների մասնաշենքերում և հյուրընկալող դպրոցին ընձեռում են իրենց գործունեությանը մասնակցելու և փորձով կիսվելու հնարավորություն: Մագնիս դպրոցի/կենտրոնի վերաբերյալ տեղեկատվությանը ծանոթանալու և Ձեր երեխայի պահանջներին համապատասխանող ծրագիրը (կամ ծրագրերը) ընտրելու համար խնդրում ենք կարդալ այս գրքույկի 21-40-րդ էջերը: Մագնիս ծրագրերից յուրաքանչյուրը ներառում է ութ ուսումնական թեմաներից մեկը՝ բիզնես, հաղորդակցության արվեստ, խորացված ուսումնասիրությունների կենտրոններ, շնորհալիներ և խիստ շնորհալիներ, լիբերալ արվեստ, հանրային ծառայություն, գիտություն/տեխնոլոգիա/ճարտարագիտություն/մաթեմատիկա կամ վիզուալ և կատարողական արվեստ:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ:

Մագնիս ծրագրերը ընդգրկում են բոլոր աշակերտների հետաքրքրությունները՝ կենտրոնանալով թեմատիկ դասավանդման և անհատական ուսման վրա: Մագնիս ծրագրերն ապահովում են ուղիներ, որոնք աշակերտներին պատրաստում են նորարարական կարիերաներին՝ մեր զարգացող համաշխարհային տնտեսության մեջ:

Մագնիս ծրագրերը ստեղծվել են ինտեգրման դատական կարգով՝ ռասայական մեկուսացման հինգ վնասներին անդրադառնալու նպատակով. դրանք են՝ ցածր ակադեմիական նվաճումը, ցածր ինքնագնահատականը, միջնակարգ դպրոցին հաջորդող հնարավորությունների հասանելիության բացակայությունը, միջռասայական թշնամությունը և անհանդուրժողականությունը և գերբնակեցված պայմանները: Դրանք համահունչ են Լոս Անջելեսի Միացյալ դպրոցական շրջանի նպատակների հետ, այն է՝ ուսումնական հաստատության 100% ավարտական ցուցանիշ, մասնագիտական հմտություններ բոլորի համար, հաճախումների 100% ցուցանիշ, ծնողների, համայնքի և աշակերտների ներգրավվածություն, դպրոցական անվտանգություն և ամուր հիմք՝ վաղ սովորողների համար:

Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ՄԱՍՆԱԿՑԵԼ:

Մագնիս ծրագրերին մասնակցելու համար կարող են դիմել K-ից 12-րդ դասարանների և L.A. Unified-ի սահմանների տարածքում ապրող աշակերտները: 21-40-րդ էջերում ծրագրերի ցանկը ներառում է յուրաքանչյուր ծրագրի համար հասանելի դասարանների մակարդակները:

Միայն շնորհալի և խիստ շնորհալի Մագնիսների (23-26 էջեր) ընտրության համար են պահանջվում հատուկ համապատասխանության չափանիշներ (էջ 7-8): Շնորհալի և խիստ շնորհալի Մագնիսների բոլոր դիմորդները պետք է ստուգվեն կամ նույնականացվեն և ներկայացնեն Մագնիսի հայտադիմում:

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՆ ԸՆՏՐՎՈՒՄ:

Մագնիս ծրագրերի համար աշակերտների ժամանակին ընտրության գործընթացը հիմնված է Մագնիսների առաջնահերթ միավորների համակարգի և դատական կարգով սահմանված «Ռասայական մեկուսացման վնասների» կրճատման վրա: Դիմումը ներկայացնելուց հետո տեղեկատվությունը հաստատվում է Շրջանի Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի կողմից (ITD), և աշակերտներին հատկացվում են միավորներ՝ հիմնվելով 5 չափանիշների վրա (տե՛ս 19-րդ էջի «Մագնիսի առաջնահերթ միավորների համակարգը»): Այս միավորների գումարն օգտագործվում է անաչառ, համակարգչային ընտրության գործընթացում: Տե՛ս էջ 20-ը՝ ուշ հայտի ներկայացման գործընթացի համար:

Աշակերտի ծնողների/խնամակալների պարտականությունն է հաստատել աշակերտի հասցեն, դասարանը և էթնիկությունը՝ L.A. Unified-ի ընթացիկ այն դպրոցում, որտեղ սովորում է երեխան, մինչև դիմումի վերջնաժամկետը:

Մագնիսի առաջնահերթ միավորները կիրառելի են միայն Մագնիս ծրագրի համար: Անվավեր (Շրջանից դուրս բնակվելու, սխալ դասարանի մակարդակի և այլն) կամ ուշ դիմում ներկայացնելու համար միավորներ չեն տրվում: Այն աշակերտերը, ովքեր երկու անգամ են դիմում՝ նույն դասարանի համար, նախորդ տարվա սպասման ցուցակի միավորներ չեն վաստակի:

ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

■	Դուք կարող եք դիմել մինչև երեք տարբեր Մագնիս ծրագրերի համար: Այնուամենայնիվ, կարող եք դիմել միայն մեկ ծրագրի համար. երկրորդ և երրորդ ընտրությունները կամընտրովի են:
■	Մագնիսների առաջնահերթության միավորներն օգտագործվում են դիմումատուի առաջին և կամընտրովի՝ երկրորդ կամ երրորդ ընտրությունների համար:
■	Եթե աշակերտներն առաջին ընտրության համար չընտրվեն, ապա նրանց դիմումը կդիտարկվի երկրորդ/երրորդ ընտրության համար:
■	Եթե աշակերտներն ընտրվեն իրենց ընտրանք(ներ)ից որևէ մեկի համար, ապա նրանց դիմումը չի հայտնվի այլ ընտրանքների սպասման ցուցակում:
■	Եթե աշակերտները չընտրվեն Մագնիս ծրագրի մեջ, նրանք կհայտնվեն սպասման ցուցակում՝ միայն իրենց առաջին ընտրության համար:
■	Այն դիմորդները, ովքեր ներկայումս մասնակցում են Մագնիս ծրագրին և ընտրվում են մեկ այլ Մագնիս ծրագրի համար, ինքնաբերաբար դուրս կգան իրենց ներկայիս Մագնիս ծրագրից:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱԳՆԻՍ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

ՄԱԳՆԻՍԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

12 ՄԻԱՎՈՐ

* **ԳՐԱՆՑՈՒՄ | Այն դիմորդները, ովքեր ավարտել են Մագնիս ծրագրի ամենաբարձր դասարանի մակարդակը, և դիմում են, որպեսզի շարունակեն մասնակցությունը մեկ այլ Մագնիս ծրագրին՝ հաջորդ մակարդակում, ստանում են գրանցման 12 միավոր: ԱՅՍ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՉԵՆ ՓՈԽԱՆՑՎՈՒՄ ԵՎ ՆՇԱՆԱԿՎՈՒՄ ԵՆ ՄԻԱՅՆ ՄԵԿ ՏԱՐՈՎ՝ ԳՐԱՆՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ:**

4-12 ՄԻԱՎՈՐ

ՍՊԱՍՄԱՆ ՑՈՒՑԱԿ | Մագնիսի վավեր, ժամանակին դիմում ներկայացրած և սպասման ցուցակում հայտնված դիմորդները հաջորդ տարվա համար ստանում են 4 միավոր: Դիմորդները կարող են նախորդ երեք անընդմեջ տարիների ընթացքում հավաքել սպասման ցուցակի առավելագույնը 12 միավոր: Եթե սպասման ցուցակում գտնվող դիմորդը հրաժարվում է Մագնիսի տեղից, ապա նա կորցնում է սպասման ցուցակի ԲՈԼՈՐ միավորները: Ամեն տարի նոր սպասման ցուցակներ են ստեղծվում: Դիմորդներին միաժամանակ ՉԵՆ տրվում և՛ գրանցման, և՛ սպասման ցուցակի միավորներ:

4 ՄԻԱՎՈՐ

ԳԵՐԱԶԱՆՑԱՊԵՍ ՀԻՍՊԱՆԻԿ, ՍԵՎԱՄՈՐԹ, ԱՍԻԱՑԻ ԵՎ ԱՅԼ ՈՉ-ԱՆԳԼՈ (PHBAO) ԴՊՐՈՑՆԵՐ | Այն դիմորդները, որոնց 2021-2022 թթ. բնակավայրի Լոս Անջելեսի Միացյալ Դպրոցական Շրջանի դպրոցը ճանաչվել է՝ որպես գերազանցապես հիսպանիկ, սևամորթ, ասիացի և այլ՝ ոչ-անգլո դպրոց, ստանում են 4 միավոր: Միավորները կուտակային չեն. դրանք նշանակվում են տարեկան կտրվածքով:

4 ՄԻԱՎՈՐ

ԳԵՐԲՆԱԿԵՑՎԱԾ | Այն դիմորդները, որոնց 2020-2021թթ. բնակավայրի L.A. Unified դպրոցը Շրջանի չափանիշներով ճանաչվել է՝ որպես գերբնակեցված, ստանում են 4 միավոր: Միավորները կուտակային չեն. դրանք նշանակվում են տարեկան կտրվածքով:

3 ՄԻԱՎՈՐ

ՔՈՒՅՐ/ԵՂԲԱՅՐ | Եթե դիմորդը դիմում է միևնույն Մագնիս դպրոցին կամ ծրագրին, որտեղ ուսումը շարունակելու է իր եղբայրը կամ քույրը, նա ստանում է 3 միավոր: Միավորները նշանակվում են, եթե եղբայրը կամ քույրը հաճախում է դիմողի առաջին ընտրած դպրոցը: Դիմումը ներկայացնելու պահին եղբայրները կամ քույրերը պետք է բնակվեն նույն հասցեում, ինչը պետք է արտացոլվի Շրջանի համակարգչային համակարգում: Աշակերտներից յուրաքանչյուրը և բոլորը պետք է ունենան գրանցված դիմումներ՝ ներառյալ երկվորյակները, եռյակները և այլն: **Աշակերտի ծնողը պարտավոր է մինչև դիմումի վերջնաժամկետի ավարտը ստուգել, որ L.A. Unified-ի ներկայիս դպրոցում, Շրջանի համակարգչային համակարգի տվյալներով՝ քույրերը կամ եղբայրները բնակվում են միևնույն հասցեում:**

* Տարրական դպրոցներում սովորող աշակերտները, ովքեր ավարտում են 6-րդ դասարանը, կստանան գրանցման միավորներ՝ 5-րդ կամ 6-րդ դասարանում: Այն աշակերտները, ովքեր ներկայումս գրանցված են մի քանի մակարդակ ունեցող Մագնիսի դպրոցներում (Eagle Rock HS Gifted, Franklin DLA, Fulton CAM, Lake Balboa CP, LAUSD/USC MAE, Los Angeles CES, Maywood CES, Science Academy STEM, Sherman Oaks CES, Sotomayor AS, Sun Valley BSELև Valley Oaks CES մագնիս դպրոցներ) չեն ստանում գրանցման միավորներ: Arroyo Seco, Laurel, Western Ave և Westside Global Awareness դպրոցներում Մագնիսները K-ից 8-րդ դասարաններում են, և աշակերտները ստանում են գրանցման միավորներ՝ միայն ութերորդ դասարանում: Դիմորդներին միաժամանակ ՉԵՆ տրվում և՛ գրանցման, և՛ սպասման ցուցակի միավորներ:

ԿԱ՞Ղ ԱՐԴՅՈՔ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ:

Փոխադրամիջոցը հասանելի է Մագնիսի որոշ ծրագրերի համար: **ՆԱԽՔԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐԵԼԸ,** դիմեք դպրոցին կամ «Տրանսպորտային ծառայությունների» բաժին, որպեսզի պարզեք, թե արդյո՞ք Մագնիս ծրագիրն առաջարկում է փոխադրամիջոց, և արդյո՞ք դպրոց տանելու և ետ բերելու մոտակա կանգառը Ձեր տնից ողջամիտ հեռավորության վրա է գտնվում: Առկա ավտոբուսային երթուղիների մասին տեղեկատվություն ստանալու համար դիմեք «Տրանսպորտային ծառայությունների բաժին»՝ 1-800-LABUSES կամ՝ (213) 580-2900 հեռախոսահամարով:

Շրջանի կողմից վարձատրվող տրանսպորտային միջոցները **ԿԱՐՈՂ ԵՆ** տրամադրվել ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ (K -ից 5-րդ/6-րդ) դիմորդներին, եթե նրանք ապրում են Մագնիս ծրագրի ուսումնական հաստատությունից երկու մղոն շառավղից դուրս հեռավորության վրա: Շրջանի կողմից վարձատրվող տրանսպորտային միջոցները **ԿԱՐՈՂ ԵՆ** տրամադրվել ՄԻՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ (6-12-րդ) դիմորդներին, եթե նրանք ապրում են Մագնիս ծրագրի ուսումնական հաստատությունից հինգ մղոն շառավղից դուրս հեռավորության վրա: Հետևյալ բազմամակարդակ դպրոցներ հաճախող աշակերտների համար գործում է երկու մղոն շառավղից դուրս հեռավորության իրավունքը՝ Arroyo Seco, Laurel, Lake Balboa, Sherman Oaks CES, Western Ave և Westside Global Awareness:

Մագնիս ծրագրում ընդգրկվող հաշմանդամություն ունեցող աշակերտները նույնպես կարող են օգտվել տրանսպորտային միջոցներից: Մագնիս ծրագրերը իրավասու աշակերտների համար կարող են իրականացնել նաև տեղափոխություն մի դպրոցից դեպի մյուսը:

ՆՇՈՒՄ: Բոլոր աշակերտների համար (մանկապարտեզից մինչև 12-րդ դասարան) միակողմանի տեղափոխության առավելագույն ժամանակի ուղեցույցը 90 րոպե է: Սա վերաբերում է բոլոր ավտոբուսային երթուղիներին:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱԳՆԻՍ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

ՄԱԳՆԻՍ ԾՐԱԳՐԵՐԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ

- Մի՛ ներկայացրեք նոր դիմում, եթե Ձեր երեխան ներկայումս ընդգրկված է Մագնիս ծրագրում և ցանկանում է շարունակել այն միևնույն դպրոցում: Մագնիս ծրագրում ներկայումս ընդգրկված դիմորդները, ովքեր հայտ են ներկայացնում և ընտրվում են մեկ այլ Մագնիս ծրագրի կողմից, ավտոմատ կերպով դուրս են մնում Մագնիսի իրենց ներկայիս ծրագրից, անկախ այն հանգամանքից, ընդունում են, թե՝ մերժում:
- Հայտը ներկայացնելու պահի դրությամբ և Մագնիս ծրագրին մասնակցելու ընթացքում դիմորդները ՊԵՏՔ է լինեն L.A. Unified-ի բնակիչներ: **Փոստարկղերի հասցեները չեն ընդունվում:**
- 17-40-րդ էջերը հիմնական տեղեկություններ են պարունակում Մագնիս ծրագրերի մասին, որոնք կօգնեն Ձեզ՝ Ձեր երեխայի համար ընտրություն կատարելիս: Թեև դուք ունեք մինչև երեք տարբեր Մագնիս ծրագրեր ընտրելու հնարավորություն, դա ամենևին էլ պարտադիր բնույթ չի կրում: Խնդրում ենք 18-րդ էջում ծանոթանալ «Ընտրության գործընթացի» բաժնի հետ, որպեսզի Ձեր դիմումի մեջ կամընտրովի դպրոց նշելուց առաջ տեղեկություններ ստանաք, թե ինչպես է կատարվում երկրորդ կամ երրորդ տարբերակ(ներ)ի ընտրության գործընթացը:
- Յուրաքանչյուր Մագնիս ծրագրի թափուր տեղերը որոշվում են՝ ըստ ռասայական հավասարակշռված ընդգրկվածության անհրաժեշտության և առկա տեղերի հասանելիության:
- Եթե դիմորդը լքում է Մագնիս ծրագիրը, նախքան ավարտական դասարանն ավարտելը, ապա նա գրանցման միավորներ չի ստանում:
- **Սպասման ցուցակում ընդգրկված աշակերտները կտեղեկացվեն ազատ տեղի վերաբերյալ՝ ուսումնական առաջին ամսվա ընթացքում: Եթե դիմորդը հրաժարվում է Մագնիսի տեղից, ապա նա կորցնում է սպասման ցուցակի ԲՈԼՈՐ միավորները:**
- Այն դիմորդները, ովքեր դեռ կցանկանան դիմել Մագնիս դպրոց կամ կենտրոն վերջնաժամկետից՝ 2021 թ. նոյեմբերի 12-ից հետո, կարող են ներկայացնել «ուշ» հայտ: **«Ուշ» հայտը թույլ է տալիս կատարել միայն մեկ ընտրություն և** կբացվի 2022 թ. փետրվարի 1-ին**:** Ուշ հայտ ներկայացրած դիմորդների համար ազատ տեղերը կբացվեն միայն այն բանից հետո, երբ ընտրված դպրոցի տեղամասի սպասման ցուցակում ընդգրկված բոլոր աշակերտներին տեղեր առաջարկվեն: Յուրաքանչյուր Մագնիս ծրագրի թափուր տեղերը որոշվում են՝ ըստ ռասայական հավասարակշռված ընդգրկվածության անհրաժեշտության և առկա տեղերի հասանելիության: «Ուշ» հայտը լրացնելը չի երաշխավորում աշակերտների ընդունելությունը և դրա համար Մագնիսի առաջնահերթ միավորներ չեն նշանակվում:

♦ Բնակավայրում մանկապարտեզ ունեցող լիարժեք դպրոցների տարրական դասարանի Մագնիս ծրագրերն առաջնահերթությունը տալիս են հաճախման սահմաններում բնակվող աշակերտներին: Ներկայումս մանկապարտեզ հաճախող երեխաներին տրվում է առաջին դասարան ընդունվելու առաջնահերթություն: Տե՛ս 21-40 էջերը՝ բնակավայրի մանկապարտեզով լիարժեք տարրական Մագնիս դպրոցների համար:

✪ Շարունակական գրանցում ունեցող Մագնիս դպրոցները դիմումներ են ընդունում ողջ ուսումնական տարվա ընթացքում: Շարունակական գրանցում ունեցող Մագնիս դպրոցները նախապատվությունը տալիս են այն աշակերտներին, ովքեր բնակվում են դպրոցի հաճախման սահմաններում: Իրավասու մյուս բոլոր L.A. Unified-ի հայտատուները կընտրվեն՝ ըստ ազատ տեղերի: Տե՛ս 21-40 էջերը՝ շարունակական գրանցում ապահովող Մագնիս դպրոցների համար:

IB Միջազգային բակալավրիատի ծրագրի կազմակերպությունը (IBO) առաջարկում է միջազգային կրթության երեք մակարդակ, որոնք ընդգրկում են տարրական, միջին և միջնակարգ ուսումնական տարիները: Միջազգային բակալավրիատի (IB) համաշխարհային դպրոց դառնալու լիազորությունը ինտենսիվ գործընթաց է, որը սովորաբար տևում է երկու կամ ավելի տարի և ներառում է IB թիմի այցելությունները դպրոցի տեղամաս: Գնահատման կանոնավոր գործընթացը կատարվում է այն դպրոցների կողմից, որոնք լիազորված են:

COMPTON UNIFIED SCHOOL DISTRICT (CUSD) / ԿՈՄՊՏՈՆԻ ՄԻԱՑՅԱԼ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԴԻՄՈՐԴՆԵՐ

L.A. Unified-ը, Կոմպտոնի Միացյալ Դպրոցական Շրջանի (CUSD) հետ համատեղ, առաջարկում է սահմանափակ թվով ազատ տեղեր Քինգ –Դրյուի բժշկության և գիտության ավագ դպրոցի / King-Drew Magnet High School of Medicine and Science/ Մագնիս ծրագրի 9-րդ դասարանում: Այս տեղերը կարող են զբաղեցնել ՄԻԱՅՆ CUSD-ի բնակիչները:

Եթե հետաքրքրված եք, որ Ձեր երեխան մասնակցի ծրագրին, խնդրում ենք Ընտրանքների դիմումում նշել King-Drew Magnet / Քինգ-Դրյուի Մագնիս ծրագիրը՝ որպես միակ ընտրություն: Ծրագրին դիմող աշակերտները պետք է իրենց ներկայիս դպրոցից ներկայացնեն 8-րդ դասարանի առաջին կիսամյակի զեկուցման քարտ**:** Զեկուցման քարտերը կարելի է ուղարկել նաև փոստով, հետևյալ հասցեով՝ Los Angeles Unified School District, Student Integration Services, 333 S. Beaudry Ave., 25th Floor, Los Angeles, CA 90017, կամ հետևյալ էլեկտրոնային փոստին՝ echoices@lausd.net՝ հասցեագրելով Compton/King-Drew Application: Ծնողի/խնամակալի պարտականությունն է ապահովել, որ «Աշակերտների Ինտեգրման ծառայությունների» բաժինը ստանա թե՛ դիմումը, թե՛ զեկուցման քարտը: Ներկայացված տեղեկատվությունը կստուգվի CUSD -ի հետ:

CUSD-ի բնակիչ աշակերտները, ովքեր կընտրվեն Քինգ–Դրյուի Բժշկության և Գիտության Ավագ Դպրոցի Մագնիս ծրագրի համար, փոխադրամիջոցի իրավունք չեն ունենա:

Ո՞ՒՄ ԿԱՐՈՂ ԵՄ ԴԻՄԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մագնիս ծրագրի վերաբերյալ հարցերի դեպքում խնդրում ենք կապ հաստատել «Ընտրանքների հարցով աջակցության բաժնի» հետ՝ (213) 241-4177 հեռախոսահամարով:

PERMITS WITH TRANSPORTATION / ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԾՐԱԳԻՐ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԾՐԱԳՐԻ (PWT) ՄԱՍԻՆ

Ի՞ՆՉ Է PWT ԾՐԱԳԻՐԸ:

Փոխադրամիջոցի իրավունքով ծրագիրը (PWT) L.A. Unified -ի սկզբնական ինտեգրման ծրագրերից մեկն է և ստեղծվել է՝ որպես դատական հրաման՝ աշակերտներին մեր շրջանի ներսում դպրոցական ինտեգրված փորձառություն տրամադրելու համար: PWT դպրոցների նշանակումները իրականացվում են Շրջանի կողմից՝ հետևյալ դպրոցներից մեկում՝ Revere MS, Portola MS կամ Taft HS: PWT ծրագիրը չի ապահովում տրանսպորտային փոխադրումներ «Մագնիսների» կամ որևէ այլ «Ընտրանքների» ծրագրի համար:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ:

PWT-ի աշակերտներն ընդգրկվում են կանոնավոր դպրոցական ծրագրում և կարող են մասնակցել բոլոր այն ծրագրերին և գործողություններին, որոնք հասանելի են ընտրված դպրոցի ռեզիդենտ աշակերտներին: Աշակերտներին և ծնողներին խրախուսվում է մասնակցել PWT դպրոցի բոլոր դպրոցական/համայնքային գործունեություններին

Ո՞Վ Է ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՍՆԱԿՑԵԼ:

Այն աշակերտները, ովքեր 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում սովորում են 6-12-րդ դասարաններում են և բնակվում են Los Angeles Unified-ի հետևյալ ռեզիդենտ դպրոցների սահմաններում, իրավասու են դիմել PWT ծրագրին.

Միջնակարգ դպրոցների շրջաններ.
Audubon, Drew, Gompers, Harte Prep, Mann, Muir և Obama Global

Ավագ դպրոցների շրջաններ.
Ánimo College Prep., Crenshaw, Dorsey, Jordan, Locke, Manual Arts և Washington Prep

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՆ ԸՆՏՐՎՈՒՄ:

PWT-ի առաջնահերթ ընտրությունը տրվում է գրանցվող PWT աշակերտներին և ծրագրում քույր /եղբայր ունեցող աշակերտներին, ովքեր նույն տարվա ընթացքում շարունակում են սովորել նույն PWT դպրոցում: Մնացած տեղերը կլրացվեն պատահականության սկզբունքով:

ԴԻՄՈՒՄԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ.

- Մի՛ ներկայացրեք նոր դիմում, եթե Ձեր երեխան ներկայումս ընդգրկված է PWT ծրագրում և ցանկանում է շարունակել այն միևնույն դպրոցում:
- PWT ծրագրում ներկայումս ընդգրկված դիմորդները, ովքեր հայտ են ներկայացնում և ընտրվում են Մագնիս ծրագրի մեջ, ավտոմատ կերպով դուրս են մնում PWT իրենց ներկայիս ծրագրից, անկախ այն հանգամանքից, ընդունում են այն, թե՝ հրաժարվում:.
- Ընտրված լինելու դեպքում՝ ծնողը/խնամակալը կարող է ընդունել կամ մերժել առցանց կամ՝ զանգահարելով դպրոց, մինչև ընտրվելու մասին նամակում նշված վերջնաժամկետը: **Եթե ծնողը/խնամակալը չի արձագանքում մինչև վերջնաժամկետը, ապա այն համարվում է մերժում:**
- Հայտը ներկայացնելու պահի դրությամբ և PWT ծրագրին մասնակցելու ընթացքում դիմորդները ՊԵՏՔ է լինեն L.A. Unified-ի բնակիչներ: **Փոստարկղերի հասցեները չեն ընդունվում:**

ԿԱ՞Մ ԱՐԴՅՈՔ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ:

Այո, PWT- ն այն ծրագիրն է, որն ապահովում է փոխադրամիջոց՝ հետևյալ ընդունող դպրոցներին, որտեղ խտրականությունը վերացած է՝
Portola MS, Revere MS, Taft High School

Ո՞ՒՄ ԿԱՐՈՂ ԵՄ ԴԻՄԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Խնդրում ենք դիմել Ընտրանքների հարցով աջակցման գծին՝ (213) 241-4177 հեռախոսահամարով, եթե ունեք հարցեր PWT-ի վերաբերյալ:

DUAL LANGUAGE EDUCATION / ԵՐԿԼԵԶՈՒ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿԼԵԶՈՒ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԵՐԿԼԵԶՈՒ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Երկլեզու կրթությունը վերաբերում է այն ծրագրերին, որոնք ապահովում են դասարանի մակարդակի բովանդակություն և գրագիտության ուսուցում երկու լեզուներով՝ անգլերենով և թիրախային լեզվով: Աշակերտները զարգացնում և ամրապնդում են իրենց ճանաչողական, գիտական և սոցիալ-մշակութային հմտությունները մի միջավայրում, որտեղ ճանաչվում են մշակութային և լեզվական հարստությունները: Los Angeles Unified-ը հպարտությամբ առաջարկում է լայնածավալ երկլեզու կրթական ծրագրեր, որոնք մեր աշակերտներին հնարավորություն կընձեռնեն զարգացնել իրենց բազմալեզու և բազմամշակութային ունակությունները, որպեսզի նրանք հաջողակ լինեն համաշխարհային հասարակությունում:

Այս գրքույկը նյութեր է տրամադրում այն ընտանիքներին, ովքեր ցանկանում են ավելին իմանալ և ուղիներ են որոնում, որ իրենց երեխաները դառնան երկլեզու/երկգրագետ և մշակութային առումով՝ գիտակ: Ներկայումս գոյություն ունեն ավելի քան 200 երկլեզու ծրագրեր՝ մանկապարտեզի անցումային մակարդակից մինչև 12-րդ դասարանների համար, որոնք հասանելի են հետևյալ ծրագրի օրինակներով՝ «Երկու ուղղությամբ խորացված», «Մեկ ուղղությամբ խորացված» և «Աշխարհի լեզուների խորացված» դասընթացներ: Ծրագրերն առաջարկվում են իսպաներեն, կորեերեն, չմանդարին, ֆրանսերեն, հայերեն, արաբերեն և ճապոներեն լեզուներով: Յուրաքանչյուր տարի ավելանում են նոր ծրագրեր:

Երկլեզու կրթական ծրագրերը գործում են կանոնավոր դպրոցների մասնաշենքերում և մասնակցում են հյուրընկալող դպրոցի միջոցառումներին և գործունեությանը: Խնդրում ենք ծանոթանալ հաջորդող էջերին և ընտրել այն ծրագրերը, որոնք համապատասխանում են Ձեր երեխայի նպատակներին: Որևէ դպրոցի տեղամասում կոնկրետ ծրագրի վերաբերյալ ավելի մանրամասն և հստակ տեղեկություն ստանալու համար խնդրում ենք կապվել այդ դպրոցի հետ՝ այն հեռախոսահամարով, որը նշված է դպրոցի անվան տակ՝ այս գրքույկի 47-56-րդ էջերում:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Մեր Շրջանի նպատակներից մեկն է՝ ավելացնել այն շրջանավարտների թիվը, ովքեր երկլեզու և երկգրագետ են:: Քանի որ աշակերտները շարունակում են մասնակցել երկլեզու կրթական ծրագրին՝ մանկապարտեզի անցումային մակարդակից մինչև 12-րդ դասարանում, նրանք հասնում են ուսումնական և լեզվական պատրաստվածության առավել բարձր մակարդակի՝ երկու լեզուներից էլ, և ստանում սոցիալ-մշակութային ընկալումներ և գիտելիքներ: Բացի այդ, այս ծրագրերով սովորողները հնարավորություն են ստանում արժանանալ Կալիֆորնիայի Կրթության վարչության State Seal of Biliteracy մրցանակին՝ 12-րդ դասարանում, և Pathway to Biliteracy մրցանակին՝5/6-րդ և 8-րդ դասարաններում:

Ո՞Վ Է ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՍՆԱԿՑԵԼ

Ի՞ՆՉ ՏԻՊԻ ԵՐԿԼԵԶՈՒ ԾՐԱԳՐԵՐ ԵՆ ՀԱՍԱՆԵԼԻ, ՈՎ Ո՞Վ Է ԻՐԱՎԱՍՈՒ

ԼԵԶՎԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԽՄԲԵՐ՝ Անգլերեն սովորող (անգլ. հապավումը՝ EL), Միայն անգլերեն (EO), Սկզբնական մակարդակի անգլերենին վարժ տիրապետող (IFEP), Անգլերենին վարժ տիրապետող՝ վերադասակարգված խումբ (RFEP):

ԵՐԿԼԵԶՈՒ, ԵՐԿԿՈՂՄԱՆԻ ԽՈՐԱՑՎԱԾ ԾՐԱԳԻՐ: ԴԱՍԱՐԱՆԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Երկլեզու, երկկողմանի խորացված կրթական ծրագիրը մշակված է՝ աշակերտներին ստանդարտների հիման վրա և դասարանի մակարդակով ուսումնական նյութեր մատուցելու համար, ինչպես անգլերեն, այնպես էլ այլ լեզվով (նպատակային, հիմնական լեզու): Ծրագիրը մշակված է, ինչպես անգլերեն սովորող (ELs), այնպես էլ անգլերեն խոսող աշակերտների համար (EO, IFEP և RFEP):

- TK, K և 1-ին դասարաններ — անգլերեն սովորողողները (Els), ովքեր խոսում են ծրագրի նպատակային, հիմնական լեզվով և անգլերեն խոսող աշակերտները (EO, IFEP, RFEP) իրավասու են մասնակցել ծրագրին:
- 2 -12-րդ դասարաններ — անգլերեն սովորողները (Els), ովքեր խոսում են ծրագրի թիրախային լեզվով, իրավասու են մասնակցել ծրագրին:
- 2-12-րդ դասարաններ — անգլերեն խոսող աշակերտները (EO, IFEP և RFEP) կարող են ընդգրկվել ծրագրի շրջանակներում, եթե նրանց թիրախային լեզվի մակարդակը հավասար է ծրագրում արդեն ընդգրկված աշակերտների մակարդակին: Այն աշակերտների համար, ովքեր նախկինում չեն մասնակցել երկլեզու կրթական ծրագրին, կանցկացվի թիրախային լեզվի գնահատում՝ դիմելու իրավունքը որոշելու նպատակով:
- Եթե դիմումների ընդունման ժամկետի ավարտի դրությամբ անգլերեն սովորողների կամ անգլերեն խոսող աշակերտների քանակը 50 տոկոսից քիչ է՝ դասարանում հավասար կշիռ ապահովելու համար, ապա դասարանի հարաբերակցությունը պետք է ձևավորվի յուրաքանչյուր լեզվական խմբից մինչև 2/3 չափով:

50 %	50 %
Անգլերեն սովորող աշակեներ, ովքեր խոսում են ծրագրի թիրախային լեզվով	Անգլերեն խոսող աշակերտներ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿԼԵԶՈՒ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեկ ուղղությամբ խորացված երկլեզու ծրագիր. դասարանի կազմությունը

Մեկ ուղղությամբ խորացված երկլեզու կրթական ծրագիրը մշակված է՝ անգլերեն սովորող աշակերտներին ստանդարտների հիման վրա դասարանի մակարդակի ուսումնական նյութերը մատուցելու համար, ինչպես անգլերեն, այնպես էլ՝ այլ լեզվով (թիրախային լեզու):

- TK, K և 1-ին դասարաններ — ծրագրի թիրախային լեզվին տիրապետող անգլերեն սովորողները (ELs) կարող են մասնակցել
- 2 -ից 12-րդ դասարաններ — կարող են մասնակցել ծրագրի թիրախային լեզվին տիրապետող անգլերեն սովորողները (ELs) :

* Թիրախային լեզվի տիրապետման հաստատում կարող է պահանջվել այն աշակերտների համար, ովքեր նոր են L.A. Unified-ում:

100 %

Անգլերեն սովորողներ, ովքեր խոսում են ծրագրի թիրախային լեզվով

ԵՐԿԼԵԶՈՒ ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՐՀԻ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԽՈՐԱՑՎԱԾ ԾՐԱԳԻՐ. ԴԱՍԱՐԱՆԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Աշխարհի լեզուների խորացված ծրագիրը մշակված է՝ անգլերեն սովորող աշակերտներին ստանդարտների հիման վրա դասարանի մակարդակի ուսումնական նյութեր մատուցելու համար, ինչպես անգլերեն, այնպես էլ՝ այլ լեզվով (թիրախային լեզու):

- TK, K և 1-ին դասարաններ — անգլերեն խոսող աշակերտները (EO, IFEP, RFEP) իրավասու են մասնակցել:
- 2 -ից -12-րդ դասարաններ — անգլերեն խոսող աշակերտները (EO, IFEP, RFEP) կարող են մասնակցել ծրագրին, եթե թիրախային լեզվի նրանց տիրապետման մակարդակը համապատասխանում է ծրագրում արդեն ընդգրկված աշակերտների մակարդակին: Դիմելու իրավունքը որոշելու համար կանցկացվի թիրախային լեզվի գնահատում այն աշակերտների համար, ովքեր նախկինում չեն մասնակցել երկլեզու կրթական ծրագրին:

100 %

Անգլերեն խոսող աշակերտներ

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՆ ԸՆՏՐՎՈՒՄ

Դիմորդներին տրվող ընտրության նախապատվությունները կկիրառվեն հետևյալ հաջորդականությամբ.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿԼԵԶՈՒ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե համապատասխան դիմորդների թիվն ավելի մեծ է, քան դպրոցում առկա տեղերը, ապա կիրառվում է պատահական, անկողմնակալ ընտրություն: Դպրոցում արդեն սովորող աշակերտների եղբայրներին ու քույրերին տրվում է հաճախման նախապատվություն: Երկլեզու կրթական ծրագրերի համար առաջնահերթ միավորների կուտակման համակարգը չի գործում: Եթե դիմորդների թիվն ավելի մեծ է, քան տվյալ դասարանում առկա տեղերը, աշակերտները կհայտնվեն սպասման ցուցակում:

- Սպասման ցուցակների թվերը չեն հրապարակվում:
- Աշակերտները մնում են սպասման ցուցակում՝ ժամանակին դիմում-հայտով իրենց կողմից առաջին ընտրված ծրագրի համար, անգամ եթե ավելի ուշ ներկայացված դիմումով առաջարկ են ստանում են որևէ այլ ծրագրի համար:
- Եթե որևէ տեղ է ազատվում, դպրոցը տեղյակ է պահում այն աշակերտների ծնողներին, ովքեր դիմել են ժամանակին կամ՝ ուշ են դիմել և գտնվում են սպասման ցուցակում: Ժամանակին կամ ավելի ուշ դիմումների սպասման ցուցակում գտնվող աշակերտների ծնողների համար հետագա գործողությունների կարիք չկա:

Reseda Charter ավագ դպրոցը իսպանախոս աշակերտների համար առաջարկում է երկլեզու ծրագրի (նորեկների) միջազգային կենտրոն: Աշակերտների ընտրությունը, գրանցումը և տեղաբաշխումը պետք է իրականացվի՝ ըստ չարտերային դպրոցների համար սահմանված նահանգային և շրջանային իրավական պահանջների: Եթե աշակերտն ընդունվում է Reseda Charter ավագ դպրոց և համապատասխանում է երկլեզու ծրագրի իրավասության չափանիշներին, ապա նա պետք է ընդգրկվի երկլեզու ծրագրի միջազգային կենտրոնում: Reseda Charter HS- ին դիմելու կամ Փոխկապակցված չարտերային դպրոցների գրանցման ընթացակարգերի մասին ավելին իմանալու համար խնդրում ենք այցելել «Ընտրանքներ» գրքույկի Փոխկապակցված չարտերային դպրոցներ բաժինը՝ 67-70 էջում:

Գրանցման չափանիշներ

- **Լեզուների դասակարգումը**

Աշակերտի՝ լեզվի տիրապետման պաշտոնական դասակարգումը որոշվում է դպրոցում գրանցվելուց հետո:

- **Աշակերտներ, ում համար պահանջվում է միջշրջանային թույլտվություն**

Ուսման առաջարկը ստանալուց հետո L.A. Unified-ի սահմաններից դուրս բնակվող աշակերտները պետք է կատարեն միջշրջանային թույլտվության գործընթացը, որպեսզի ավարտեն նշանակված դպրոցի ընդունելության գործընթացը: Միջշրջանային թույլտվության գործընթացի հղումը գտնվում է https://Apply.LAUSD.net վեբկայքում կամ կարող եք զանգահարել «Թույլտվությունների աջակցության» գծին՝ (213) 202-7547 հեռախոսահամարով:

- Երկլեզու ուսուցման ծրագրի որոշ դպրոցներ առաջարկում են «Անցումային մանկապարտեզի» (TK) ծրագիր: Խնդրում ենք դիմել դպրոց՝ տարիքային պահանջների և լրացուցիչ տեղեկությունների համար:

ԿԱ՞ ԱՐԴՅՈՔ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ

ՆԱԽՔԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼԸ, ՆԿԱՏԻ ՈՒՆԵՑԵՔ, ՈՐ ԵՐԿԼԵԶՈՒ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ ՉԻ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ:

Բացառություններ.

- Երկլեզու կրթական ծրագրերում ընդգրկված հաշմանդամ աշակերտներին փոխադրամիջոց կտրամադրվի, եթե այն պահաջվի իրենց անհատական կրթական ծրագրի (IEP) կողմից:
- Համաձայն «Յուրաքանչյուր աշակերտի առաջխաղացման մասին» ակտի (ESSA)՝ ըստ սահմանվածի արտատնային պայմաններում խնամքի տակ գտնվող, ինչպես նաև՝ անօթևան վիճակում գտնվող աշակերտները փոխադրամիջոցների իրավունք ունեն՝ դեպի իրենց դպրոց և հակառակ ուղղությամբ: Լրացուցիչ տեղեկատվություն և (կամ) օգնություն ստանալու համար խնդրում ենք զանգահարել աշակերտների աջակցման կենտրոն՝ (213) 241-3840 հեռախոսահամարով:

Ո՞ՒՄ ԿԱՐՈՂ ԵՄ ԴԻՄԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երկլեզու կրթական ծրագրերի վերաբերյալ հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Ընտրությունների հարցով աջակցության գիծ՝ (213) 241-4177 հեռախոսահամարով:

SCHOOLS FOR ADVANCED STUDIES / ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Շնորհալի/տաղանդավոր աշակերտներն առանձին բնագավառներում ցուցաբերում են փաստացի բարձր նվաճումներ և ունեն հատուկ ծառայությունների և աջակցության կարիք, որպեսզի կարողանան լիարժեք զարգացնել իրենց ներուժը և նպաստել ուսումնական հաջողություններին: Շնորհալի/տաղանդավոր աշակերտներին տրամադրվող ծրագրերը և խորացված ուսուցման հնարավորությունները կոչված են համապատասխանել Շրջանի յուրաքանչյուր դպրոցի՝ K-ից 12-րդ դասարանների շնորհալի/տաղանդավոր ուսանողների բացառիկ ուսումնական և սոցիալ-զգայական կարիքներին, ներառյալ՝ տեղական բնակավայրի դպրոցների աշակերտների: Լոս Անջելեսի Միացյալ Դպրոցական Շրջանի յուրաքանչյուր դպրոց, որն ունի աչքի ընկնող կամ արդեն հաստատված շնորհալի աշակերտներ, անկախ ծրագրի տեսակից, պետք է ստեղծի նման աշակերտների ուսումնական խմբակների միավորում և տրամադրի առանձնահատուկ իմաստալից ուսումնառության հնարավորություններ, որոնք կխթանեն աշակերտների առանձնապես բարձր արդյունքների նվաճմանը և դասարանի մակարդակից բարձր սպասելիքների գերազանցմանը:

Խորացված ուսումնական դպրոցների տեղամասերը ստանում են այդ նշանակումը՝ իրենց օրինակելի տաղանդավոր և շնորհալի կրթության (GATE) իրականացման համար: Բարձրագույն ուսումնական դպրոցների նշանակումն առաջին անգամ կատարվել է 1998–1999 ուս. տարում և ստեղծվել է, որպեսզի ճանաչի ողջ դպրոցական շրջանում նորարար, հավասար և արդյունավետ GATE կրթության համար օրինակելի դպրոցական մոդելը: Ապահովելով բարձորակ և առանձնահատուկ ուսումնառություն և շեշտը դնելով նորարարության, բազմակողմանիության, արագության և խորացվածության վրա՝ այդ դպրոցների տեղամասերն առաջարկում են բարձր մակարդակի ուսումնական հնարավորություններ, որոնք համապատասխանում են K–ից 12-րդ դասարանների այն շնորհալի աշակերտների յուրահատուկ պահանջներին և կարիքներին, ովքեր աչքի են ընկնում ինտելեկտուալ, բարձր առաջադիմության, հատուկ ակադեմիական, ստեղծարար և առաջնորդության ընդունակությունների կատեգորիաներում կամ առանձնանում են իրենց դրսևորած քննադատական մտքի/առաջադիմության ընդունակությամբ: Հինգ տարին մեկ ռեզիդենտ դպրոցները պետք է անցնեն չափազանց խիստ դիմումի ընթացակարգ՝ բարձրագույն ուսուցման նշանակումը ստանալու կամ պահպանելու համար:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Շնորհալի/տաղանդավոր աշակերտների համար ծրագրերը նպատակ ունեն բացահայտելու շնորհալի և տաղանդավոր աշակերտներին, ներառյալ՝ տարբեր ռասայի, սոցիալ-տնտեսական, լեզվական և մշակութային ծագման աշակերտներին և նրանց տրամադրել բարձրորակ առանձնահատուկ ուսումնառության հնարավորություններ, որպեսզի նրանք կարողանան զարգացնել իրենց սեփական բացառիկ ունակությունները և տաղանդները:

Բարձրագույն ուսումնական դպրոցների նշանակումն արտացոլում է Շրջանի պարտավորությունը՝ բարձրագույն ուսուցման հավասար մատչելիությունը, գերազանցությունը և հաշվետու լինելը ողջ Շրջանում շնորհալի/տաղանդավոր աշակերտների համար ապահովելու նպատակով: Բարձրագույն ուսումնական դպրոցների տեղամասերը ծառայում են՝ որպես Շրջանի ցուցադրական կենտրոններ՝ շնորհալի/տաղանդավոր աշակերտների համար բազմազան դասակարգերում նորարարական և գիտահետազոտական տարբեր ուսումնական ծրագրերի և ուսուցման համար: Բարձրագույն ուսումնական դպրոցների տեղամասերն արդեն հաստատվել են որպես կայուն, բարձր արդյունավետությամբ, օրինակելի տաղանդավոր և շնորհալի աշակերտների համար կրթական ծրագրեր առաջարկող դպրոցներ, որն ընդգրկում է GATE ծրագրի հիմնական հետևյալ բաղադրիչները. 1) տաղանդավոր աշակերտի բացահայտում/նույնականացում; 2) GATE ծրագրի սովորողների ուսուցանում և բարձր առաջադիմական նվաճումներ; 3) բանիմաց և փորձառու անձնակազմ՝ շնորհալի աշակերտների կրթության համար, 4) ծնողների, ընտանիքի և համայնքի ներգրավում:

Տարբերվելու հատկանիշը GATE / SAS դասարաններում շնորհալի և տաղանդավոր աշակերտների յուրահատուկ կրթական կարիքները պատշաճ կերպով անդրադառնալու երաշխիքի էական մասն է: Տարբերվող ծրագիրը «ավելի շատ նույնից» կամ պարզապես բովանդակության կամ ուսուցման տեմպերի արագացումը չէ, այլ այն ներառում է խորացվածություն, բազմակողմանիության և նորարարություն: GATE / SAS խմբավորումը դպրոցներին թույլ է տալիս ապահովել ավելի բարդ դասընթացներ՝ շնորհալի և բարձր ընդունակություն ունեցող աշակերտներին ապահովելով ավելի բարձր մակարդակի բովանդակության և նոր ուսուցման առօրյա հասանելիություն, ինչպես նաև՝ ձևավորելով աշակերտների ակադեմիական խումբ՝ հիմնական առարկաներից:

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ

Շնորհալի/տաղանդավոր աշակերտներին պետք է ուսուցանեն բանիմաց ուսուցիչները, ովքեր ունեն հատուկ/տարբերվող ուսումնական ծրագրերի դասավանդման հմտություններ՝ աշակերտներին սովորելու գործընթացում աջակցելու և նրանց առաջադիմությունը խթանելու համար: Այդ առումով՝ GATE-ի շնորհալի/տաղանդավոր աշակերտներին ուսուցանելու և նրանց սովորելու լավագույն ձևերի մասին մասնագիտական զարգացման պարապմունքները և թրեյնինգները ուսուցիչների և ադմինիստրատորների ակնկալիքների էական և շարունակական մասն են կազմում: Յուրաքանչյուր դպրոցի GATE ծրագիրը պետք է գտնվի ադմինիստրատորների, GATE համակարգողների և կրթությանն աջակցող անձնակազմի ուշադրության կենտրոնում, ովքեր պետք է ունենան GATE ծրագրերում աշխատելու հաստատուն փորձ: SAS ծրագրում աշխատող ուսուցիչներից և ադմինիստրատորներից պահանջվում է մասնակցել տարեկան մասնագիտական զարգացման վերապատրաստմանը, որը մասնավորապես ուղղված է շնորհալի/տաղանդավոր աշակերտների բացառիկ ակադեմիական, ուսումնական և սոցիալ-զգայական կարիքները բավարարելուն, որպեսզի մատուցվող ուսումնական նյութերը և կրթությունը (բովանդակություն, գործընթաց և արդյունք) հանգամանալից մտածված և տարբերվող լինեն՝ աշակերտների խստապահանջությունը, ուսումնական առաջադիմությունը և նորարարությունը զարգացնելու նպատակով:

Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ՄԱՍՆԱԿՑԵԼ

- Այն աշակերտները, ովքեր բնակվում են նշանակված SAS խորացված ուսումնական դպրոցների տեղամասերի սահմաններում և համապատասխանում են ընդունելության չափանիշներին, պետք է ընդգրկվեն տեղամասի բարձրագույն ուսումնական դպրոցի տաղանդավորների/շնորհալիների ծրագրում (եթե ծնողը չի հրաժարվում): Բոլոր որակավորված աշակերտները, ովքեր բնակվում են դպրոցի սահմաններում, պետք է ընդունվեն, նախքան դպրոցի սահմաններից դուրս որևէ աշակերտների ընդունումը: **Դպրոցի շրջանի սահմաններում բնակվող աշակերտների համար որևէ պաշտոնական դիմում պետք չէ, քանի որ SAS բարձրագույն ուսումնական դպրոցի ծրագիրը հանդիսանում է դպրոցի տեղամասի GATE-ի ուսումնական ծրագիր՝ իր աշակերտների համար:**

- L.A. Unified-ի PreK-ից 12-րդ դասարանների բոլոր աշակերտները, ովքեր բնակվում են դպրոցի սահմաններից դուրս և համապատասխանում են պահանջվող երեք չափանիշներից մեկին, կարող են դիմել՝ SAS խորացված ուսումնական դպրոցի ծրագրին հաջորդ տարի մասնակցելու համար: SAS դիմորդների համար աշակերտի ներկայիս դպրոցի ուսուցիչը և տնօրենն են պատասխանատու՝ որոշելու առաջադրված երեք չափանիշներից առնվազն մեկին նրա համապատասխանությունը:

- Մասնավոր դպրոցի, անկախ չարտերային և L.A. Unified-ի կազմի մեջ չգտնվող այլ դպրոցների (ներառյալ մանկապարտեզի համար SAS ծրագրի դիմողները) աշակերտների ծնողի կամ խնամակալի պարտականությունն է համոզվել, որ համապատասխան ***Մասնակցության իրավունքի հաստատման*** ձևաթուղթը ԵՎ դիմումը ներկայացվել են, մինչև վերջնաժամկետը:

- Մասնակցության իրավասության ստուգման համար խնդրում ենք հղում կատարել այս գրքույկի 7-8-րդ էջերին:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

SAS ԴԻՄՈՐԴՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՆ ԵՐԵՔ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՑ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿԻՆ.

ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՐԴԸ ՊԵՏՔ Է ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՑ ՈՐԵՎԷ ՄԵԿԻՆ՝ ՄԻՆՉԵՎ 2021 Թ.ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ը՝ ՈՒՐԲԱԹ ՕՐԸ, ԺԱՄԸ՝ 17:00:

Ⓐ **Աշակերտը L.A. Unified-ի կողմից նշանակված GATE հոգեբանի կողմից ճանաչվում է տաղանդավոր՝ ինտելեկտուալ, բարձր նվաճման, հատուկ ակադեմիական, ստեղծագործական կամ առաջնորդական ընդունակության դասակարգում: ԿԱՄ**

Ⓑ **Կիրառելիության դեպքում, Շրջանի կողմից հաստատված ստանդարտացված նորմերով թեստերից 2020 թ. աշակերտը գրանցել է 85% կամ ավելի բարձր արդյունք՝ ընդհանուր երկրի մակարդակով տոկոսային գնահատմամբ: Նշում. «Ավելի խելացի հավասարակշռված գնահատման կոնսորցիումի» (SBAC) հեռացման պատճառով այս չափանիշը փոփոխվել է միայն այս տարվա համար: ԿԱՄ**

Ⓒ **Աշակերտը ցուցաբերում է համապատասխանություն՝ ստորև նշված քննադատական մտածողության և խնդիրների լուծման ԲՈԼՈՐ ՉՈՐՍ հմտություններից (հիմնական լեզվով) ՝**

a) Բացատրել փաստերի, տեղեկատվության, կամ հասկացությունների իմաստները կամ դրանց միջև հարաբերությունները՝ ցուցադրելով խորացված և բազմակողմանի մոտեցում

b) Ձևակերպել նոր գաղափարներ կամ լուծումներ և մշակել տեղեկատվությունը

c) Օգտագործել այլընտրանքային մեթոդներ՝ նոր կամ անծանոթ մաթեմատիկական խնդիրներ լուծելիս

d) Հեշտությամբ և ճշգրիտ օգտագործել լայն բառապաշար՝ ստեղծագործ մտքեր արտահայտելու համար

Աշակերտի հաճախած դպրոցը որոշելու է, թե արդյոք Ձեր երեխան ցուցաբեռում է այս չափանիշի բոլոր չորս հմտությունները (այսինքն ՝ քննադատական մտածողության և խնդիրների լուծման չորս հմտությունները): Քննադատական մտածողության և խնդիրների լուծման չորս հմտությունների չափանիշով ստուգված դիմորդները պետք է նաև ցուցաբերեն ունակություն կամ մեծ ներուժ՝ ուսումնական առարկաներից դասարանի մակարդակից երկու տարով ավել մակարդակի վրա գտնվելու համար: ՆՇՈՒՄ: Մանկապարտեզի SAS (բարձրագույն ուսուցման դպրոցների) դիմորդները նույնպես պետք է ստուգվեն՝ օգտագործելով «***Մասնակցության իրավունքի հաստատման» (SAS մանկապարտեզ) ձևի*** հատուկ չափանիշները: Աշակերտի հաճախած ընթացիկ դպրոցի կողմից ներկայացված երաշխավորագիրը վերջնական է:

Հավասարություն և մատչելիություն ապահովելու համար ընտրության գործընթացում SAS իրավասության երեք չափանիշերից յուրաքանչյուրը հավասար կշիռ ունի: Հետևաբար, առաջնահերթ տեղաբաշխում չի կարող տրվել այն աշակերտներին, ովքեր ճանաչվել են որպես շնորհալի / խիստ շնորհալի կամ նրանք, ովքեր համապատասխանում են թեստի գնահատման չափանիշներին: Շնորհալի աշակերտների ճանաչման կամ SAS- ի իրավասության հետ կապված հարցումների համար խնդրում ենք կապվել Շնորհալի / տաղանդավոր աշակերտների ծրագրերի բաժնի հետ՝((213) 241-8361 հեռախոսահամարով կամ՝ gate@lausd.net:

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ SAS ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

«Բարձրագույն ուսուցման դպրոցների» ծրագիրը K-ից 12-րդ դասարանների տեղամասային նշանակում է: Այս ծրագրի շրջանակում անցումային մանկապարտեզի դասերը հասանելի չեն: SAS ծրագրի շրջանակներում՝ բոլոր մանկապարտեզ ընդունվողները պետք է հաստատվեն նախադպրոցական կրթարանի կամ անցումային մանկապարտեսզի ղեկավարի/ադմինիստրատոր կողմից՝ որպես պահանջվող չափանիշներին համապատասխանող (այսինքն՝ քննադատական մտածողության և խնդիրներ լուծելու ունակություններով օժտված), ինչպես նաև SAS-ի՝ մանկապարտեզին բնորոշ 20 չափանիշներից նվազագույնը 10-ին համապատասխանող.

- Կարող է ինքնուրույն աշխատել՝ նպատակին ուղղված վարքի ապացույցով
- Նախադասությունների մեջ օգտագործում է նկարագրական բառեր և օգտագործում է լեզուն՝ հույզերը, գաղափարները և կարծիքներն արտահայտելու համար (հիմնական լեզվով)
- Կարող է պատմել կամ վերապատմել պատմվածքը՝ արտահայտիչ և մանրամասն նկարագրությամբ (հիմնական լեզվով)
- Կարող է ճանաչել և կրկնել բարդ օրինակների հաջորդականությունները և ստեղծել սեփական օրինակները
- Կարող է հետևել բազմաքայլ հրահանգներին՝ քիչ ցուցումներով կամ ուղղումներով
- Ճանաչում է A-ից Z տառերը, գիտի այբուբենի բոլոր տառերի հնչյունները և կարող է տառերի մեծ մասը գրել
- Կարող է բանավոր հաշվել մինչև 100-ը, տեսողականորեն ճանաչել 1-ից մինչև 100 թվերը և գրել 1-ից 25 թվերը
- Ցուցադրում է գումարման, հանման, բազմապատկման և բաժանման բնածին կամ արագ ընկալում
- Կարող է հիշել տեղեկություններն ու փորձերը (օրինակ՝ կարող է արտասանել երգի բառերը, հիշել փաստերը և այլն) և կապակցել դրանք
- Կարող է տեսողականորոն ճանաչել բառերը և կարդալ սահուն և հասկանալով
- Ցուցադրում է խիստ մտահոգություն ուրիշների և նրանց զգացմունքների վերաբերյալ; ունի արդարության ուժեղ զգացում
- Նախաձեռնում է խաղեր, համակարգում և ինտեգրում է մի շարք լրացուցիչ դերեր և հաշվի է առնում մյուսների գործողությունները
- Խաղերի մեջ օգտագործում է ոչ սովորական առարկաներ
- Հեշտությամբ շփվում է հասակակիցների հետ; հասակակիցները հաճախակի են փնտրում նրան՝ ընկերակցության, գաղափարների և որոշումների համար
- Ցուցադրում է հումորի հասուն զգացում; պատասխանում է և ստեղծում հանելուկներ և բանավոր ասոցիացիաներ
- Ազատ խաղերում ցուցադրում է մտածելու, տրամաբանելու, ստեղծագործականության և ուսումնական գործողությունների ինքնաբուխ ապացույցներ
- Արտահայտում է գաղափարներ, տեղեկատվություն է փնտրում հարցերի միջոցով և սիրում է շփվել չափահասների և ավելի մեծ երեխաների հետ
- Սովորելիս ցուցադրում է առաջադրանքի նկատմամբ մեծ հանձնառություն և էներգիա
- Կարող է հիշել բարդ տեղեկությունը և վերծանել խորհրդանշական համակարգերը (օրինակ ՝ քարտեզներ, ծածկագրեր և այլն)
- Ցուցաբերում է հետաքրքրասիրություն, գիտելիքների անսպասելի խորություն՝ մեկ կամ մի քանի բնագավառներում

Մանկապարտեզի այն դիմորդների համար, ովքեր չեն ընդունվում նախադպրոցական հաստատություն կամ անցումային մանկապարտեզ, խնդրում ենք կապվել շնորհալի/տաղանդավոր ծրագրերի բաժնի հետ՝ (213) 241-4177 հեռախոսահամարով կամ գրել GATE@lausd.net հասցեին՝ ստուգման ընթացակարգերի մասին տեղեկությունների համար: Կարող եք նաև այցելել Շնորհալի/տաղանդավոր ծրագրերի վեբ կայք՝ achieve.lausd.net/gate հասցեով (ընտրեք “Program Options” և “SAS”):

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՆ ԸՆՏՐՎՈՒՄ

SAS ծրագրի այն դիմորդները, ովքեր համապատասխանում են դիմելու չափանիշներին և բնակվում են տվյալ դպրոցի սահմաններից դուրս, սակայն L.A. Unified-ի սահմաններում, կարող են ընտրվել ծրագրին մասնակցելու համար՝ նշանակված SAS տեղամասի սահմաններում բնակվող աշակերտներին ընդունելուց հետո:

1. Եղբայրներ և քույրեր, ովքեր բնակվում են L.A. Unified-ի սահմաններում (պետք է համապատասխանեն SAS ծրագրի չափանիշներին):
2. Աշակերտներ, ովքեր բնակվում են L.A. Unified-ի սահմաններում (պետք է համապատասխանեն SAS ծրագրի չափանիշներին):

Եթե համապատասխան դիմորդների թիվն ավելի մեծ է, քան դպրոցում առկա տեղերը, ապա կիրառվում է պատահական, անկողմնակալ ընտրություն: Դպրոցում արդեն սովորող աշակերտների եղբայրներին ու քույրերին տրվում է նախապատվություն, այնքան ժամանակ, քանի դեռ սովորող իրենց եղբայրները կամ քույրերը չեն տեղափոխվել: Բարձրագույն ուսուցման դպրոցների ծրագրերի համար առաջնահերթ միավորների կուտակման համակարգ չի գործում: Առաջնահերթ միավորներն օգտագործվում են միայն Մագնիս ծրագրում:

ԻՆՉՊԵ՞Ս ԴԻՄԵՄ SAS ԾՐԱԳՐԻ ՆՇՈՒՄՈՎ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՉԱՐՏԵՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ

Աշակերտների ընտրությունը, ընդունելությունը և SAS դպրոցների շնորհալի/տաղանդավոր ծրագրով փոխկապակցված չարտերային դպրոցներում տեղավորումը պետք է իրականացվի՝ չարտերային դպրոցների մասին Նահանգի և Շրջանի իրավական պահանջներին համապատասխան: Եթե աշակերտն ընտրվում է նշանակված որևէ SAS դպրոց՝ փոխկապակցված չարտերային ընթացակարգով, և համապատասխանում է SAS ծրագրի չափանիշներից մեկին, ապա այդ աշակերտը պետք է ընդունվի նույն տեղամասի SAS շնորհալի/տաղանդավոր աշակերտների ծրագրում: Փոխկապակցված չարտերային դպրոցների ընդունելության ընթացակարգերի մասին տեղեկությունների համար խնդրում ենք հղում կատարել այս գրքույկի Փոխկապակցված չարտերային դպրոցներ բաժնին, էջ 67-70:

ԻՆՉՊԵ՞Ս ԴԻՄԵՄ SAS ԾՐԱԳՐԻ ՆՇՈՒՄՈՎ ԴՊՐՈՑ՝ ԻՄ ՆԱԽԸՆՏՐԱԾ ՏԱՐԱԾՔՈՒՄ:

Եթե ծնողը ցանկանում է, որ իր երեխան հաճախի խորացված ուսուցման դպրոց (SAS) իրենց ընտրած տարածքում / (անգլ. հապավումը՝ ZOC),ապա 5-րդ, 6-րդ կամ 8-րդ դասարանի աշակերտը պետք է այդ տեղամասն ընտրի նախընտրելի տարածքի (ZOC) ընտրության ընթացքում: Եթե ZOC- ի ընտրելու ընթացքում աշակերտը նշանակվում է SAS դպրոցի որոշակի տեղամասում, և համապատասխանում է SAS ծրագրի չափանիշներից մեկին, ապա այդ աշակերտը պետք է ընդգրկվի նույն տեղամասի շնորհալի/տաղանդավոր աշակերտների ծրագրում: ZOC- ի գրասենյակի միջոցով տեղաբաշխման մասին բողոքները չեն քննարկվի, եթե աշակերտը չի ընտրել SAS դպրոցի տեղամասը՝ որպես առաջին ընտրություն ZOC ընտրելու ընթացքում: Նախընտրելի տարածքների մասին տեղեկության համար խնդրում ենք զանգահարել ZOC-ի գրասենյակ՝ (213) 241-0466 հեռախոսահամարով կամ՝ այցելել achieve.lausd.net/zoc

ԿԱ՞Ս ԱՐԴՅՈՔ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒՑ ԱՌԱՋ ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼ, ՈՐ SAS ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ ՉԻ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ:

Բացառություններ.

- Բարձրագույն ուսուցման դպրոց ընդունվող հաշմանդամ աշակերտներին փոխադրամիջոց կտրամադրվի, եթե այն պահաջվի իրենց անհատական կրթական ծրագրի (IEP) կողմից:
- Համաձայն «Յուրաքանչյուր աշակերտի առաջխաղացման մասին» ակտի (ESSA)՝ ըստ սահմանվախ արտատնային պայմաններում խնամքի տակ գտնվող, ինչպես նաև անօթևան վիճակում հայտնված երեխաներն ու պատանիները փոխադրամիջոցների իրավունք ունեն՝ դեպի իրենց սկզբնական դպրոց և հակառակ ուղղությամբ: Լրացուցիչ տեղեկատվություն և/կամ օգնություն ստանալու համար խնդրում ենք զանգահարել աշակերտների աջակցման կենտրոն՝ (213) 241-3840 հեռախոսահամարով:

Ո՞ՒՄ ԿԱՐՈՂ ԵՄ ԴԻՄԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Խորացված ուսուցման դպրոցների վերաբերյալ հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Ընտրանքների հարցերով աջակցության գիծ՝ (213) 241-4177 հեռախոսահամարով կամ գրել՝ applyforschools@lausd.net հասցեին

ADMISSION CRITERIA SCHOOLS / ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՈՎ ԴՊՐՈՑՆԵՐ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՈՎ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՈՎ ԴՊՐՈՑՆԵՐԸ (ACS)

Ընդունելության հատուկ չափանիշներով դպրոցներն (ACS) ունեն լրացուցիչ ընտրական պահանջներ: L.A. Unified-ն առաջարկում է երկու Առաջնորդության ակադեմիաներ (միևնույն սեռերի համար), որոնք ունեն գիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական և մաթեմատիկական ուղղվածություն, և չորս նախաքոլեջային ծրագրեր՝ ավագ դպրոցի աշակերտների զուգահեռ գրանցման հնարավորությամբ: Խնդրում ենք այցելել դպրոցի վեբկայք և զանգահարել դպրոց՝ մասնակցելու տեղեկատվական ժողովներին, որպեսզի տեղեկանաք յուրաքանչյուր դպրոցի եզակի չափանիշների մասին, նախքան Ընտրանքի հայտը ներկայացնելը:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- Քոլեջի և կարիերայի պատրաստվածություն: 3 ACS դպրոցներ առաջարկում են քոլեջում զուգահեռ գրանցում.
  - AA աստիճան
  - Ուղի դեպի քոլեջ
  - Քոլեջի միավորներ վաստակել
- Միևնույն սեռի համար դպոցներն ունեն առաջնորդության և STEAM կարիերայի պատրաստվածության ուղղվածություն:

Ո՞Վ Է ԻՐԱՎԱՍՈՒ ԴԻՄԵԼ

- L.A. Unified-ի սահմաններում և դրա սահմաններից դուրս բնակվող բոլոր աշակերտները կարող են դիմել:
- Դեկտեմբերին դպրոցը կկապվի դիմորդների հետ՝ իրենց իրավասության որոշման գործընթացին մասնակցելու համար:
- Ընտրական գործընթացի փուլին անցնելու համար աշակերտները պետք է բավարարեն իրավասության պահանջները:
- Շրջանից դուրս աշակերտները պետք է բավարարեն ընդունելության չափանիշները և ստանան միջշրջանային թույլտվություն՝ ACS դպրոց հաճախելու համար:

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՆ ԸՆՏՐՎՈՒՄ

Դիմորդների ընտրության նախապատվությունները կկիրառվեն հետևյալ հերթականությամբ.

1. **Ներկայիս աշակերտների քույր/եղբայրները**
2. **Ընտրված դպրոցից 5 մղոն շառավղով ապրող աշակերտները**
3. **Los Angeles Unified-ի սահմաններում ապրող աշակերտները**
4. **Los Angeles Unified-ի սահմաններում ապրող աշակերտները**

* Երկվորյակներ. եթե երկվորյակներից մեկն ընտրվում է, ապա մյուս երկվորյակը ինքնաբերաբար ընդունվում է:

ԿԱ՞Մ ԱՐԴՅՈՔ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒՑ ԱՌԱՋ ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼ, ՈՐ ACS ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ <u>ՉԻ</u> ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ

Բացառություններ.

- ACS դպրոց ընդունվող հաշմանդամ աշակերտներին փոխադրամիջոց կտրամադրվի, եթե այն պահաջվի իրենց անհատական կրթական ծրագրի (IEP) կողմից:
- Համաձայն «Յուրաքանչյուր աշակերտի առաջխաղացման մասին» ակտի (ESSA)՝ ըստ սահմանվածի՝ արտատնային պայմաններում խնամքի տակ գտնվող, ինչպես նաև՝ անօթևան վիճակում հայտնված երեխաներն ու պատանիները փոխադրամիջոցների իրավունք ունեն՝ դեպի իրենց սկզբնական դպրոց և հակառակ ուղղությամբ: Լրացուցիչ տեղեկատվություն և/կամ օգնություն ստանալու համար խնդրում ենք զանգահարել աշակերտների աջակցման կենտրոն՝ (213) 241-3840 հեռախոսահամարով:

AFFILIATED CHARTER SCHOOLS / ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՉԱՐՏԵՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՉԱՐՏԵՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՉԱՐՏԵՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Փոխկապակցված չարտերային դպրոցները կիսաինքնավար շրջանային հանրային դպրոցներ են, որոնք փոխկապակցված չարտերային կարգավիճակի են վերածվել՝ կանոնադրական խնդրագիր ներկայացնելու գործընթացի միջոցով: Դպրոցները լիազորված են L.A. Unified-ի Կրթության խորհրդի կողմից: Փոխկապակցված չարտերային դպրոցները ղեկավարվում են L.A. Unified-ի Կրթության խորհրդի կողմից և գործում են՝ ըստ Շրջանային քաղաքականության, Խորհրդի կանոնակարգի, նահանգի և դաշնային օրենսդրության, հավաքական բանակցությունների համաձայնագրերի և մարդկային ռեսուրսների/կադրերի հանձնաժողովի ուղեցույցներին համապատասխան: Փոխկապակցված չարտերային դպրոցները անմիջական վերահսկողություն են ստանում համապատասխան Տեղական Շրջանային գրասենյակի և L.A. Unified-ի Չարտերային դպրոցների բաժնի կողմից: Դպրոցներին տրվում է ճկունություն՝ չարտերային դպրոցի կատեգորիկ բլոկի դրամաշնորհի օգտագործման համար, ինչպես նաև՝ ուսումնական պլանի և մասնագիտական զարգացման ոլորտներում, տեղական դպրոցների կառավարման որոշ հատկանիշներում և աշխատողների ընտրության որոշ հատկանիշներում:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Յուրաքանչյուր փոխկապակցված չարտերային դպրոց ունի իր դպրոցի հատուկ նպատակները, որոնք սահմանված են դպրոցի կանոնադրության խնդրագրում և դպրոցի տարեկան վերանայվող «Տեղական վերահսկողության և հաշվետվողականության ծրագրի» (անգլ. հապավումը՝ LCAP) փաստաթղթում:

Ո՞Վ Է ԻՐԱՎԱՍՈՒ ԴԻՄԵԼ

Կալիֆորնիա նահանգում բնակվող բոլոր աշակերտներն իրավասու են դիմել փոխկապակցված չարտերային դպրոց հաճախելու համար: Այնուամենայնիվ, դպրոցը նախնառաջ պետք է ծառայի իր հաճախման սահմանում բնակվող աշակերտներին: Այն ծնողները, ովքեր ապրում են Փոխկապակցված չարտերային դպրոցի՝ ռեզիդենտների համար հաճախման սահմաններում, գրանցման համար կարիք չունեն դիմում ներկայացնելու և կարող են անմիջապես կապվել դպրոցի հետ՝ ընդունելության համար:

Այն ծնողները, ովքեր ապրում են Փոխկապակցված չարտերային դպրոցի հաճախման սահմաններից դուրս, պետք է դիմեն Միասնական գրանցման դիմումի միջոցով: Դպրոցը, համագործակցելով Շրջանի հետ, որոշում է, թե արդյոք առկա է լրացուցիչ տեղ: Եթե ոչ ռեզիդենտ ընտանիքների կողմից գրանցման ավելի մեծ հետաքրքրություն կա, քան հասանելի տեղ, ապա դպրոցը մնացած տեղերի համար պետք է անցկացնի պատահական հանրային վիճակախաղ: Վիճակախաղի արդյունքում մնացած տեղերը նախ առաջարկվում են L.A. Unified-ի սահմաններում բնակվող աշակերտներին , այնուհետև՝ մյուս աշակերտներին: Փոխկապակցված չարտերային դպրոց ընդունվելու համար դիմելու կամ ընտրվելու համար անհրաժեշտ չէ օգտագործել Շրջանի թույլտվության գործընթացը:

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՆ ԸՆՏՐՎՈՒՄ

- Ծնողները պետք է դիմեն ժամանակին ներկայացվող հայտերի ընդունման ժամանակահատվածում առցանց՝ http://goto.lausd.net կայքում կամ ներկայացնելով թղթային հայտ:
- Մեկից ավել փոխկապակցված չարտերային դպրոցներ դիմելու համար պետք է դիմել առցանց:
- Բազմակի փոխկապակցված չարտերային դպրոցներ դիմելիս նախապատվության կարգ չկա. ժամանակին դիմողները վիճակախաղի մեջ կմտնեն յուրաքանչյուր դպրոցում, որտեղ դիմել են:
- Դպրոցը վիճակախաղի ամսաթիվը և ժամանակը կհրապարակի իրենց կայքում և գլխավոր գրասենյակում:
- Վիճակախաղին ներկա գտնվելը՝ նախընտրելի է, բայց պարտադիր չէ:
- Բոլոր վիճակախաղերն անցկացվելու են յուրաքանչյուր տարի, փետրվար ամսվա ընթացքում:
- Վիճակախաղում բոլոր հայտերը խմբավորվում են՝ ըստ առաջնահերթության կարգի և պատահականորեն քաշվում են՝ մնացած առկա տեղերը լրացնելու և սպասման ցուցակ ստեղծելու համար: Աշակերտները սպասման ցուցակում կմնան միայն մեկ ուսումնական տարի:
- Շրջանային մակարդակով առաջնահերթություններից բացի, յուրաքանչյուր փոխկապակցված չարտերային դպրոց կարող է ունենալ վիճակախաղի լրացուցիչ առաջնահերթություններ, որոնք ներառված են իրենց անհատական կանոնադրության միջնորդագրում:
- Եթե հասանելի տեղերի քանակը գերազանցում է հետաքրքրված ընտանիքների քանակին, (օր.՝ կա 30 հասանելի տեղ և դիմում է 10 ընտանիք), ապա վիճակախաղի կարիք չի լինի: Այդ ընտանիքների հետ կապ կհաստատվի՝ գրանցման գործընթացը համապատասխան ժամկետում ավարտելու համար:

ԿԱ՞Մ ԱՐԴՅՈՔ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ

ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՉԱՐՏԵՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ ՉԻ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ

Բացառություններ.

- Փոխկապակցված չարտերային դպրոց ընդունվող հաշմանդամ աշակերտներին փոխադրամիջոց կտրամադրվի, եթե այն պահաջվի իրենց անհատական կրթական ծրագրի (IEP) կողմից:
- Համաձայն «Յուրաքանչյուր աշակերտի առաջխաղացման մասին» ակտի (ESSA)՝ արտատնային պայմաններում խնամքի տակ գտնվող, ինչպես նաև՝ անօթևան երեխաներն ու պատանիները փոխադրամիջոցների իրավունք ունեն՝ դեպի իրենց սկզբնական դպրոց և հակառակ ուղղությամբ: Լրացուցիչ տեղեկատվություն և/կամ օգնություն ստանալու համար խնդրում ենք զանգահարել աշակերտների աջակցման կենտրոն՝ (213) 241-3840 հեռախոսահամարով:

Ո՞ՒՄ ԿԱՐՈՂ ԵՄ ԴԻՄԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Խնդրում ենք կապվել կոնկրետ փոխկապակցված չարտերային դպրոցի հետ՝ ուսումնական ծրագրի, նպատակների և հանրային պատահական վիճակախաղի ընթացակարգի վերաբերյալ: Այլ հարցումների համար խնդրում ենք դիմել Չարտերային դպրոցների բաժին՝ (213) 241-0399 հեռախոսահամարով:

Անկախ չարտերային դպրոցների համար ՄԻ՛ օգտագործեք միասնական գրանցման հայտադիմումը: Անկախ չարտերային դպրոցների (հանրային դպրոցներ, որոնք L.A. Unified-ից անկախ են, սակայն լիազորված են նրա կողմից) վերաբերյալ հարցերը, որոնք միասնական գրանցման հայտադիմումի մաս չեն կազմում, կարող են ուղղվել Չարտերային դպրոցների բաժնի գրասենյակ:

L.A. UNIFIED-Ի ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐ

ԲԱՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ HTTPS://ACHIEVE.LAUSD.NET/K12OPENENROLLMENT

K-ից 12-րդ դասարանների բաց ընդունելության գործընթացը նահանգային որոշում է, որը թույլ է տալիս LAUSD-ի աշակերտներին դիմել Լոս Անջելեսի ցանկացած կանոնավոր, համապատասխան դասարանի հանրակրթական դպրոց՝ բաց ընդունելությամբ նշանակված տեղերով: Ծնողները կամ խնամակալները, ովքեր ցանկանում են իրենց երեխային ներկա հաճախման դպրոցից ուրիշ՝ այլ դպրոցում գրանցել, պետք է լրացնեն բաց ընդունելության հայտը:

- Ճիշտ ժամանակին դիմելու ժամկետը սկսվում է մայիսի առաջին շաբաթվա ընթացքում այն դպրոցների համար, որոնք ունեն բաց գրանցման համար նախատեսված հասանելի ազատ տեղեր: Այն դպրոցների համար, որտեղ հայտերը գերազանցում են Բաց գրանցման տեղերի հայտարարված թիվը, հունիսի սկզբին կանցկացվի պատահական էլեկտրոնային վիճակախաղ:
- Համակարգված է Դպրոցի կառավարման ծառայությունների/Գլխավոր պլանավորման և ժողովրդագրության գրասենյակի կողմից ՝ որպես ռեզիդենտ դպրոցներին այլընտրանքային գրանցման տարբերակ:
- Այցելեք վեբկայք՝ http://achieve.lausd.net/k12OpenEnrollment, կամ մայիսի առաջին շաբաթվա ընթացքում գնացեք Los Angeles Unified-ի դպրոց՝ մասնակցող դպրոցների ցուցակի, առցանց դիմումների ցուցումների և յուրաքանչյուր դպրոցում բաց գրանցման տեղերի քանակի վերաբերյալ տեղեկությունների համար: Լրացուցիչ օգնության համար զանգահարեք Դպրոցի կառավարման ծառայություններ/գլխավոր պլանավորման և ժողովրդագրության բաժին / School Management Services/Master Planning and Demographics՝ (213) 241-8044 հեռախոսահամարով:
- **(Այս գրքույկի մեջ եղած դիմումի ձևը ՉՕԳՏԱԳՈՐԾԵԼ:)**
- Շրջանային տրանսպորտը հասանելի **ՉԷ:**

ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐ HTTPS://ACHIEVE.LAUSD.NET/ZOC

Նախընտրելի տարածքներն առաջարկում են հետաքրքիր ծրագրեր արվեստի, բիզնեսի, գիտությունների, հումանիտար գիտությունների, սոցիալական արդարադատության ոլորտներում և ավելին՝ անմիջապես Ձեր հարևանությամբ: Աշակերտները հնարավորություն ունեն ընտրելու և դասակարգելու իրենց բնակության տարածքի դպրոցները: Դպրոցների ընտրանքները ներառում են մեծ կամպուսներ, փոքր ուսումնական համայնքներ, ակադեմիաներ և ավելին: Նախընտրելի տարածքում բնակվող աշակերտներն իրավունք ունեն հաճախել տարածքի ցանկացած դպրոց:

- Նախընտրելի տարածքի դպրոց հաճախելու իրավասությունը հիմնված է տան հասցեի և ընդունելության տեղերի քանակի վրա:
- Նախընտրելի տարածքի տարբերակներն աշակերտներին առաջարկում են հետևել իրենց անհատական ակադեմիական հետաքրքրություններին:
- Նախընտրելի տարածքի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք կայք՝ http://achieve.lausd.net/zoc կամ՝ զանգահարեք (213) 241-0466 հեռախոսահամարով:
- Էլ. փոստի հասցե՝ ZOC@lausd.net
- **(Այս գրքույկի մեջ եղած դիմումի ձևը ՉՕԳՏԱԳՈՐԾԵԼ:)**
- Շրջանային տրանսպորտը հասանելի **ՉԷ:**

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ HTTPS://GOTO.LAUSD.NET

UNIFIED ENROLLMENT

- Համոզվել, որ ընտանիքները տեղյակ են L.A. Unified-ի ԲՈԼՈՐ դպրոցների և ծրագրերի մասին՝ ընտանիքների համար ստեղծելով պարզեցված գործընթաց և մեկ պատուհան:
- Ստեղծել ավելի հարմար, հավասար և մատչելի դիմումի գործընթաց այն ընտանիքների համար, ովքեր ցանկանում են դպրոցների ընտրություն կատարել:
- Ապահովել, որ աշակերտներն ընդունվեն դպրոցներ՝ իրենց ակադեմիական հետաքրքրություններին համապատասխան, ինչպես նաև՝ շրջանի մեջ նոր ընտանիքներ ներգրավել: